

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **ازتاک** جريدة يومية سياسية وأدبية - المودة، السؤلة، إيتا، ورويشيان

1500 L.Ո. 74ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 270 (21026) ՈՒՐԲԱԾ, 1 ՓԵՏՐՈՒՄ 2002 10 ԷԶ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ - ԻՍԼԱՄ
ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Ասկիքան եկեղեցու պետ ճորձ Քերի արքեպիսկոպոս նախանցել օր Լոս-տոնի մէջ հանդիպում մը ունեցաւ Եգիպտոսի կրօնապետ իմամ Մոհամէտ Սայէտ Թանթաուիի հետ: Հանդիպումին կնքուեցաւ քրիստոնէայ - իսլամ գործակցութեան եւ փոխադարձ հասկացողութեան համաձայնութիւն մը:
«Երկու տարբեր կրօններու հաւատացող ժողովուրդներու միջեւ երկխօսութեան անհրաժեշտութիւնը աշխարհին մէջ այս ժամանակաշրջանին այսչափ անհրաժեշտ չէ եղած», ըսաւ Քերի արքեպիսկոպոս:
Ասկիքան եկեղեցու պետը ընդգծեց, որ քրիստոնէայ - իսլամ երկխօսութիւնը շարունակելու եւ խորացնելու քայլը շատ քաջալերական է:
(ՌՈՅԹԸՐԶ)

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՈՎ ԿԱՐԳ ՄԸ ՄԱՔԱՏՈՒՐԵՐՈՒ ՆՈՒԱԶՈՒՄ

Նախարարաց խորհուրդը երէկ գումարեց արտակարգ նիստ մը. լաւելեալ արժէքի տուրքի նախօրէակին մեղմացնելու կարգ մը մաքսատուրքեր:

Սիստը գլխաւորեց նախագահ Կօր. Էմիլ Լահուտ: Ներկայ էին վարչապետ Ռաֆիք Հարիրի եւ նախարարները, բացառութեամբ փոխ վարչապետ Իսմայիլ Ֆարէսի եւ նախարարներ Սլէյման Ֆրենիքի, Էլիաս Մըրի, Միշել Մուսայի եւ Թալալ Արալանի:

Ժողովին ետք տեղեկատուութեան նախարար Ղալի Արիտի յայտարարեց, թէ որոշում է հետեւեալ նուազումները կատարելու ներածուած հազուատեղէնի մաքսատուրքը իջեցնել 15էն 5 առ հարիւրի, ներածուած կաշիի մաքսատուրքը՝ 20 առ հարիւրէն 10 առ հարիւրի, իսկ ծխախոտի 138 առ հարիւրի տուրքը իջեցնել 113 առ հարիւրի: «Այս որոշումներով, լաւելեալ արժէքի տուրքի լաւելումէ տքանփոփոխ պիտի մնան այս ապրանքներուն գիները»: Ասոնց կողքին, որոշուեցաւ ներածուած հազուատեղէնի «որակի» տուրքը իջեցնել 25% համեմատութեամբ, եւ չորս հազար լ. ոսկինոց «որակի տուրք» դնել ներածուած «փլաւթի-



Նախագահ Լահուտ եւ վարչապետ Հարիրի ժողովէն անաջ:

քէ» կօշիկներուն վրայ, բացի Եւրոպական Միութենէն ներածուած կօշիկներուն:

Արիտի ըսաւ, որ նաեւ որոշուեցաւ թաղապետները վերձ դարձնել եկամտահարկէն:

Տեղեկատուութեան նախարարը դրուատիքով խօսեցաւ արարները գործոց նախարարներու Պէյրուսի մէջ գումարուած ժողովին մասին, ուր որդեգրուած է դիմադրութիւնը ահաբեկչութենէն պահպանող Լիբանանի կեցուածքը: «Նախարարաց խորհուրդը բարձր գնահատեց իջեալ ժողովի յաջողութեան եւ այս արդիւնքին հասնելու համար ի գործ դրուած ճիգերը», ըսաւ ան:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՅՈՒՆ

Յաւելեալ արժէքի

ՇԱՐՈՆ ԿՐ ՅԱՒԻ, ՈՐ 1982ԻՆ ԶԷ «ՄԱՔՐԱԳՈՐԾԱԾ» ԵԱՍԵՐ ԱՐԱՖԱԹԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն թափ տուաւ տիրող լարուածութեան՝ յայտարարելով, որ Իսրայէլ պէտք էր ձեռքազատէր Եսսէր Արաֆատէն 1982ին, երբ պաղեստինցի ղեկավարը պաշարման տակ առած էր Պէյրուսի մէջ:

Շարոնի յայտարարութիւնը դուռը գրեթէ կը փակէ հաշտութեան եւ 16ամսեայ խռովութիւններուն վերջ տալու յոյսերուն դիմաց: Շարոն, որ կը խօսէր «Մարիլ» օրաթերթին կողմէ հրատարակուած հարցազրոյցի մը ընթացքին, ըսաւ, որ երբ Իսրայէլեան ուժերը Պէյրուսի հասած էին 1982ին եւ շրջափակած պաղեստինեան զաղթականները, որոշում տուեցաւ Արաֆատը չսպաննելու: «Կը ցախիմ, որ զայն չմաքրագործեցինք», ըսաւ Շարոն, որ պաշտպանութեան նախարար էր այդ Հանգըրլանին եւ առաջնորդած էր Պէյրուսի ներխուժումը:

Կառավարութեան բանբեր Ռասան Կիսին երէկ վերստին շեշտեց, որ Իսրայէլ Արաֆատը տապալելու կամ սպաննելու ծրագիրներ չունի, թէեւ զայն արդեւափակած կը պահէ Ռամալլայի մէջ:

Շարոնի յայտարարութիւնը դատապարտուեցաւ պաղեստինցիներու ու այլ երկիրներու կողմէ: Պաղեստինցի պաշտօնատարներ դատապարտեցին Շարոնը, զիտել տալով, որ անոր խօսք-



Շարոն կը գղջայ, որ չէ սպաննած Արաֆատը:

ըր կը հաստատեն, որ Իսրայէլ կ'ուզէ աւարտել 1982ին սկսածը: Սակայն Ուրալթաթ աւելցրեց, որ վարչապետի մը կողմէ նման յայտարարութիւն ցոյց կու տայ, թէ ինչպիսի կառավարութեան հետ գործ կ'ունենայ պաղեստինեան իշխանութիւնը:

Սպանիոյ արտաքին գործոց նախարար խոսեցի Փիլքէ իր կարգին քննադատեց Շարոնը: Փիլքէ ըսաւ, որ այսպիսի յայտարարութիւններ կը մերժուին Սպանիոյ կողմէ, որ Եւրոպական Միութեան ընթացիկ նստաշրջանի նախագահութիւնը ստանձնած է: Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարները երկուշաբթի օրուան իրենց նիստին կողմէ շեշտեցին Իսրայէլի իրենց խաղաղութեան ընկերակից ճանաչելու պաղեստինեան իշխանութիւնն ու անոր նախագահ Արաֆատը: Սակայն անոնք

պաղեստինեան իշխանութեան այս տարուան օժանդակութիւնը, իբրեւ գորակցութիւն Եսսէր Արաֆատի: Արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ անցեալ տարուան 140 միլիոն քրաուն օժանդակութիւնը պիտի բարձրանայ 164 միլիոնի (15,42 միլիոն տոլար):

Միւս կողմէ, Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրօտըրը ըսաւ, որ Եւրոպայ պէտք է ճնշուած բանեցնէ Արաֆատի վրայ, որպէսզի զարեցնէ Իսրայէլի դէմ յարձակումները: Շրօտըրը աւելցրեց, որ Արաֆատը պէտք է ստանձնէ Իսրայէլի դէմ ահաբեկչութիւն գործողները:

Շար.՝ Էջ 10

ՃՈՆՁ ՊԱՔՈՒ ԱՅՅԵԼԱԾ Է

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի տեղակալ Էլիզապէթ Շոնգ կարճատեւ այցելութեան մը համար Յունուար 29ին Ժամանած է Պարո: Շոնգ հանդիպում ունեցած է Ազգայնապետի նախագահ Հայտար Ալիեի հետ, որուն հետ քննարկած է շրջանային եւ ամերիկեալագրիական յարաբերութիւններուն առնչուող հարցեր:

Ըստ ազգայնապետ լրատուամիջոցներու, Շոնգ յայտարարած է, որ Ազգայնապետի ամերիկեան ուղղակի օժանդակութիւնները արգիլող 907 Յօդուածի առկայութեան տարբերակները հարցազնուելու են քոլոր մարզերէն մերս, երկկողմանի յարաբերութիւններու զարգացման եւ անհրաժեշտ համար:

Շոնգ Ալիեի փոխանցած է Միացեալ Նահանգներու նախագահ Շոնգ Պուշի, փոխ նախագահ Տիմ Չէյնի եւ պաշտպանութեան նախարար Տոնալ Ռամսֆելտի շնորհակալութիւնը: «Միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ ամերիկեան գործողութիւններուն աշխուժ մասնակցութեան եւ աջակցութեան համար»: Էլիզապէթ Շոնգ նաեւ հետաքրքրուած է Հայտար Ալիեի Մոսկուա այցելութեան արդիւնքով:

Հայտար Ալիեի հետ հանդիպումէն անմիջապէս ետք Էլիզապէթ Շոնգ ուղղուած է դէպի օդակայան, շարունակելու համար իր ուղեւորութիւնը դէպի Կեդրոնական Ասիա:

ԹՈՒՐԹԻՈՅ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՄԸ ԿԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի ազգային անվտանգութեան մարմիններ Յունուար 26ին ձեռքարկուած են Թուրքիոյ հետախուզական գործակալութեան անդամ մը: Գործակալը, որ Հայաստանի քաղաքացի է, Թուրքիոյ ազգային հետախուզական կազմակերպութեան (MIT) յանձնառութեամբ հաւաքած եւ փոխանցած է քաղաքական, ռազմական եւ տնտեսական բնագաւառներու առնչուող տեղեկութիւններ:

Հայաստանի ազգային անվտանգութեան նախարարութեան քննչական վարչութեան կողմէ բացուած է քննութիւն: Ամբաստանալը կը մեղադրուի Հայաստանի քրէական օրէնսգիրքի 59րդ յօդուածի հիման վրայ, որ կ'առնչուի հայրենիքի դաւաճանութեան՝ լրտեսութեան միջոցով:

(ԱՐՄԵՆՓՐԵՍ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ Հ. Տ. ՖՈՐՈՒՄԻՆ

Համաշխարհային Տնտեսական Փորձը Նիւ Եորքի մէջ այսօր պիտի սկսի իր աշխատանքներուն: Մասնակցելու համար Փորձը, Հայաստանի պատուիրակութիւնը երէկ մեկնեցաւ Նիւ Եորք: Պատուիրակութիւնը կ'աշխատէ մինչեւ 25 փետրուար:

Շար.՝ Էջ 10

ԱՅՂԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՄԻՋԵՒԻ ԲԱԽՈՒՄՆԵՐ

Յաջողութեամբ երկրորդ օրն ըլլալով աֆղան հատուածներու միջեւ բախումներ տեղի ունեցած են երէկ հարաւարեւելեան կարտէզ քաղաքը հակակշիռի տակ առնելու համար՝ կշիռ տալով փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարգայի կողմէ՝ երկրին մէջ միջազգային ապահովութեան տարածումին առնչութեամբ:

Ըստ աֆղան «Էյ. Այ. Փի.» լրատու գործակալութեան, 38 հոգի սպաննուած է:

Փառլազ իման Զատրան Քապուլի փոխանցման կառավարութեան կողմէ նշանակուած է կարտէզի կառավարիչ, սակայն քաղաքին մէջ աղբիւրներ յայտնած են, թէ ցեղախուժներու կարգ մը ղեկավարներ եւ նախկին մուսախիտի գինեալներ՝ հրամանատարութեամբ Համի Սաֆուլլայի, մերժած են նշանակումը ընդունել:

Մինչ Աֆղանիստանի մէջ օտար երկիրներու կողմէ հռչակուած պատերազմը կը թուի դէպի յաղթանակ ուղղուել, երկրին մէջ տիրող անօրինութիւնը կը սպառնայ



Բրիտանիոյ վարչապետը եւ Հ. Քարգայ:

ի վնաս Քարգայի նոր կառավարութեան ըլլալ եւ մնալուն խաղաղութեան յոյսերը ի դերեւ հանել: Քարգայ երէկ Բրիտանիա հասած է եւ վարչապետ թոնի Պլէյրի յայտնած է, թէ աֆղանները յաւելեալ միջազգային ուժեր կ'ուզեն իրենց երկրին մէջ:

Պլէյր անոր ըսած է, թէ


Բրիտանիա յաւելեալ ուժեր չի կրնար յատկացնել միջազգային ընդարձակուած ուժի մը, որ կը պահանջուի աֆղաններու կողմէ:

Բրիտանիա ներկայիս կը զլիաւորէ Քապուլի մէջ հաստատուած ուժը, սակայն անիկա Ապրիլի

Շար.՝ Էջ 9

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱԻԱԽՔ



«Ազգակ» յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

● Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:

● Բովանդակութիւնը տեսնել՝ էջ 2:

Գին՝ 15.000 լ.Ո.

ՁԵՐ ՀԱՐԱՁԱՏՆԵՐՈՒՆ
ՏԱՐԵԴԱՐՉԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ
VIDEOԻ ԿԱՄ ՇՈՒ ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ
ԳՐՈՒԱԾ ԵՒ ԽՕՍՈՒԱԾ ՉՈՐՍ ԼԵՂՈՒՆԵՐՈՎ
Մանրամասն. համար դիմել՝ **ԱՐԱ ԸԵԸԵՃԵԱՆ ՀԱՍՏ.**
Հեռ. 01/261696, 03/250518 փիւրուն
Մասնաւոր գեղջ առաջին 25 դիմողներուն:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Շարաթ, 26 Յունուար 2002, Անթիլիասի մայրափանջին մէջ, հանդիպում մը կայացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններէն՝ Նարեկ Մ. վրդ. Ալեքեանի, Մաշտոց վրդ. Չօպանանի եւ Գեղարդ արզ. Քրիստֆանի եւ Մերձակոր Արեւելի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան հովիւներէն՝ վեր. Փոյ Հայրոսթեանի եւ վեր. Ներսէս Պապանեանի միջև, իրրեւ նախաբայլ հայ հոգեւորականներու միջև տեղի ունենալիք կրօնական, հովուական, ազգային եւ մշակութային քննարկումներու եւ համագործակցութեան՝ Լիբանանի մէջ եւ Լիբանանէն դուրս, մէկ ազգի եւ մէկ հաւատքի պատկանելութեան հրամայականէն մեկնած:

ՀՐԴՅՐԱՅԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՏԻՆ ԿԸ ԿԱՆԳՆԻ ԻՍՐԱՅԷԼ

ԿԸՍԵՆ ԼԻԲԱՆԱՆԵՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՑՈՒՅԻՉՆԵՐԸ

Լիբանանեան կուսակցութիւններու եւ քաղաքական ուժերու ներկայացուցիչները երէկ գումարեցին ժողով մը, որուն աւարտին հրապարակուած հաղորդագրութեամբ մը հաստատեցին, որ նախկին նախարար էլի Հրապարակի սպանութեան ետին կը կանգնի իսրայէլ, որ այս ոճիրով կը փորձէր շփոթի մատնել ներքին բնը, հարուածել ապահովութիւնն ու կայունութիւնը եւ չհզոքացնել Սապրա - Շաթիլայի ջրղիկի վերաբերելու Արիէլ Շարոնի դէմ գլխաւոր վկայն:

Հաղորդագրութիւնը հաստատեց, որ վատթարացած են երկրին տնտեսական եւ ընկերային պայմանները, եւ եթէ չարունակուի նոյն քաղաքականութիւնը, երկիրը պիտի հասնի անկումի, հետեւաբար անհրաժեշտ է մշակել փրկութեան ծրագիր:

Հաղորդագրութիւնը նաեւ մերժեց Միացեալ Նահանգներու նախագահ Ջորջ Պուշի կատարած Հրգպայլոյի Համախի, իսրայմական ժխտարար, իրանի եւ Իրաքի դէմ յայտարարութիւնները:

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ՝ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊՈՒՆԱՏԱՆ ՄՕՏ

Լիբանանեան երիտասարդական եւ ուսանողական կազմակերպութիւններու անգամ մօտ հարիւր երիտասարդներ երէկ ցոյց մը կատարեցին Աուքարի մէջ, ամերիկեան դեսպանատան մօտ, բողոքելու համար պաղեստինցի ժողովուրդին դէմ իսրայէլեան վարչապետութիւններուն եւ գաննոք քողարկող Միացեալ Նահանգներու դէմ:

Ցուցարարները կանգ առին դեսպանատունէն մէկ քիլոմետր հեռավորութեան վրայ, ուր ճամբան փակած փլաթիւրներուն ետին կանգնած էին ճանապարհորդները, որոնք ապահովութեան եւ քաղաքային պաշտպանութեան ուժերը:

Ն. Ա. Ուժերը փակած էին դեսպանատուն տանող բոլոր ճամբաները:

ՀԱՆԳԻՍԱԿՈՐ ՍՈՒՐԵ ԵՒ ԱՆՍԱՀ ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 3 Փետրուար 2002ին, Մարաշի Աղէտին 82րդ տարեկիցին առիթով, համոզնաւոր Սուրբ Եւ Ամնաի պատարագ պիտի մատուցուի Սրբոջ Զառասնոց Մանկանց եկեղեցոյ մէջ:

Պիտի մախագահէ եւ քարոզէ՝

ԳԵՐԾ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սկիզբ ժամերգութեան Կատարագ Զարոզ Ըոգեհանգիստ

Ժամը 7:30ին Ժամը 9:30ին Ժամը 10:30ին Ժամը 11:30ին

Սիրով կը իրաւորեմք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան:

ՍՐԲՈՅ ԸՈՒԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՆԵՏԻՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Արրահամ Տէտեան եւ զաւակունք Տիկին Երանուշի Մանիսաճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Մահար Տէտեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յակոբ Տէտեան եւ զաւակունք Տիկին Աննայի Էօրէճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յովհաննէս Աճէճեան եւ զաւակունք Սաղամեան ընտանիք

Եախուր ընտանիք
Մանիսայեան ընտանիք
Լէփէճեան ընտանիք
Մանիսաճեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին

ՇՈՒՃԱՆ ՏԵՏԵԱՆԻ (ՇՈՒՅՈՒՄԱՂԱՄԵԱՆ, 1921ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 31 Յունուար 2002, երեկոյան, իր ընկալարանին մէջ:

Յուզարկալուցութեան պաշտամունքը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 1 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, էջրեֆիէի Հայ Աւետ. եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ճորձ Շրպիւքի Հայ Աւետ. գերեզմանատունը:

● Ներկայ ընդունելի իրրեւ մահագլ:

● Ցուակցութիւնները կ'ընդունուին այնօր՝ Ուրբաթ 1, Շարաթ 2 եւ Կիրակի 3 Փետրուար, հանգուցեալին աղջկան՝ տիկին Երան Մանիսաճեանի բնակարանը, Նահր էլ Սոր, «Հրքմէ» փողոց: Իսկ երկուշաբթի 4 եւ երեքշաբթի 5 Փետրուարին հանգուցեալին գաւկի մէջ տեղի ունի Արրահամ Տէտեանի բնակարանը, Քրքմէ Շեհուան, Պայտատ:

ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐ ԸՆՆԱԴԱՏԵՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵԼԱԶԵԸ

Խորհրդարանը երէկ շարունակեց 2002ի պետական պիտութի նախագիծի քննարկումը:

Երէկուան նիստին վարչապետ Ռաֆիք Հարիրի դժգոհութիւն յայտնեց ժողովակարանին «ստադար» ընթացքին համար:

«Համակիր եւ ընդդիմադիր երեսփոխաններ կը խօսին ամբողջ օրը, իսկ մեզի կ'արտօնուի պատասխանել միայն վերջաւորութեան, մինչ այդ քաղաքացիները կը տպաւորուին եւ անոնց մտքերուն մէջ կը մնան երեսփոխաններու խօսքերն ու անձիջ տեղեկութիւնները», ըսաւ ան:

Հարիրի նաեւ քննադատեց «համակիր» երեսփոխանները, որոնք ընդդիմութիւնը «մաշակելէ» ետք ընդդիմադիրներուն պէտք տեղի կ'առնէր:

Հարիրի նաեւ քննադատեց «համակիր» երեսփոխանները, որոնք ընդդիմութիւնը «մաշակելէ» ետք ընդդիմադիրներուն պէտք տեղի կ'առնէր:

«Լիբանանի ժողովուրդային եւ պետական անվիշող կեցածքը ամբողջ մըն է, որ անտիկ պիտի մնայ ամերիկեան եւ պիտական ահաբեկումի բոլոր փորձերուն դիմաց», ըսաւ ան:

Երեսփոխան Սելիմ Սաաուէ հարց տուաւ, որ «Թաէֆի համաձայնագիրը մեզ պատերազմէն դուրս բերաւ, բայց ի՞նչպէս դուրս պիտի գանք այս պետական պարտքէն»:

Երեսփոխան Արթուր Մատնանի ըսաւ, որ պիտութի նախագիծը դրական նշաններ կու տայ՝ հիմնուելով կառավարութեան իրագործումներուն վրայ: Ան պարմանք յայտնեց պետական վարչամեքնայի բարեկարգումներու յետաձգումին համար:

Երեսփոխան Քայսար Մուաուատ հաստատեց, որ հարեւիքի դիրքը ամրապնդելու համար անհրաժեշտ է վստահութիւն: «Ո՛ր կայուն քաղաքական համակարգի կամ վարչաձեւի մէջ կ'մնայ»

պատմական անկիւնադարձի բնագիծին կիրքեր կը իրահուին եւ համայնքային, դաւանական ու տեղայնական պատմէշներ կը բարձրանան», հարց տուաւ ան:

Արթուր Մատնանի երեսփոխաններուն հարցը խօսք տուաւ երեսփոխան Սամի Սաթիպ: Ան հաստատեց, որ պիտութի նախագիծը կը քննարկուի նուրբ պայմաններու մէջ եւ քաղաքացիները անկարող դարձած են վճարելու տուրքերը:

Սաթիպ քննադատեց իշխանութեան պետերուն միջեւ հարցերը, որոնք վստահութիւններ կ'ուսնան: Ան նաեւ քննադատեց սահմանադրական կառուցութիւնը, որոնք իրենց լիազորութիւններուն տեղէն կանգնի եւ անհատներ կը գործածեն պատմը:

Ան կոչ ուղղեց փոխելու կառավարութիւնը, որ իր դերը կատարած է եւ ժողովուրդի «աչքէն ինկած է»: Սաթիպ նաեւ կոչ ուղղեց վարչապետ Հարիրիի «մտքերը լուսնայնապաշարելու»:

Երեսփոխան Միսպահ Ախուպ վերապահութիւն յայտնեց ծախսեր կրճատելու կառավարութեան քաղաքականութեան եւ դիտել տուաւ, որ Լիբանանի տնտեսական համակարգի «սիւնը» դարձած են տուրքերու յաւելումները, որով հետեւ դուրսէն սպասուած լուծումները պիտի չգան:

քական ծրագիր պետք է ունենայ:

Երեսփոխան Նասիբ Քանիլի հարց տուաւ, որ ինչնօ ստեղծուած է այն տպաւորութիւնը, թէ խորհրդարանի այս լիազումարը կառավարութեան լուծեալն տապալումի նիստի կը կառավարութեան նմանի: «Արդեօք բոլորս մտքը լուսեցրե՞նք եւ կառավարութեան նմանի: Ան նաեւ պայմաններու մէջ եւ քաղաքացիները անկարող դարձած են վճարելու տուրքերը: Սաթիպ քննադատեց իշխանութեան պետերուն միջեւ հարցերը, որոնք վստահութիւններ կ'ուսնան: Ան նաեւ քննադատեց սահմանադրական կառուցութիւնը, որոնք իրենց լիազորութիւններուն տեղէն կանգնի եւ անհատներ կը գործածեն պատմը:

Ան կոչ ուղղեց փոխելու կառավարութիւնը, որ իր դերը կատարած է եւ ժողովուրդի «աչքէն ինկած է»: Սաթիպ նաեւ կոչ ուղղեց վարչապետ Հարիրիի «մտքերը լուսնայնապաշարելու»:

Երեսփոխան Միսպահ Ախուպ վերապահութիւն յայտնեց ծախսեր կրճատելու կառավարութեան քաղաքականութեան եւ դիտել տուաւ, որ Լիբանանի տնտեսական համակարգի «սիւնը» դարձած են տուրքերու յաւելումները, որով հետեւ դուրսէն սպասուած լուծումները պիտի չգան:

ԸԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● **ՆԱԽԱԳԱՀ ԳՕՐ. ԻՄԻ Լահուտ երէկ ընդունեց** խորհրդարանի փոխ նախագահ էլի Ճորջիւն, Կեղոն-նական Դրամատան կառավարչի Ռիատ Սալամէն, նախկին երեսփոխաններ Միշէլ Սաթիպ եւ Հապիպ Հաքիմ, Թունուզի մէջ Լիբանանի դեսպան Ռեմոն Ռուֆայէլը, Միշտպայի Օրանաւորութեան Կազմակերպութեան նախագահ Ասաստ Բրթէյլը եւ Լիբանանի քաղաքային օդանաւորութեան գրասենեակի տնօրէն Թոնի Հըլուն:

● **ՄՐՏԱԲԻՆ** գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ վերահաստատեց Հրպայլայի եւ դիմադրութեան գծով Լիբանանի սկսբուքային կեցուածքը, յայտնելով, որ այս կեցուածքը անընդհատ կը յիշեցուի ամերիկեան կողմին:

Միւս կողմէ, Համմուտ հաստատեց, որ յաւելեալ արժեքի տուրքը ուղղակի անդրադարձ պիտի չունենայ պարզ քաղաքացիին վրայ, մասնաւոր որ սպառողական ապրանքներու 63 առ հարիւրը վերծ են այդ տուրքին:

ՀԱՅՐԵՆԻ ՉԱԻԱԽՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Մէկ ազգ Կարանդ Փափագեան
Ախալքայի պայքարը Բուրբէն
Տաշիրի գաւառին բռնագրաւումը Բուրբէն
Ընդհանուր պահակա Վարչապետի հիւսիսային
սահմաններին վրայ Լէօ
Չաւախքի պատմութիւն Աշոտ Մելքոնեան
Չաւախքիցիները արեւմտահայ պատագրական
պայքարում Աշոտ Մելքոնեան
Ախալքայի հայ համայնքի պատմութիւնը Փրոֆ. Կ. Գ. Լաֆարգեան*

*Տանջուած ժողովուրդի մը չքնաղ հայրենիքը՝
Չաւախք Վ. Աւագեան
Արցախեան պատմամարտին ջախքիցի
նահատակները
Հոգեւոր - եկեղեցական կեանքը Չաւախքում
Աշոտ Մելքոնեան*

*Նորօրէն հոգեւոր կեանքը հինաւոր Չաւախք
աշխարհում Սասնաօր սարկաւազ Դուլիկեան
Չաւախքի մշակութային կեանքը Հայկազուն Ալվրցեան*

*Չաւախքի գեղանկարչներու ետեակը Մովսէս Ծիրանի
Չաւախքի աշուղները Չաւախքի Բէշէշեան*

*Չաւախքի կրթական համակարգը Եւ. Նաւոյեան
Հայ մամուլը եւ գրատպութիւնը Չաւախքում եւ
Մեխիթրում Վահան Մաղախեան
Բաց դարպաս՝ սահմանէն անդին Ծողիկ Աշոգեան*

*Չաւախքի պատմական յուշարձանները Սամուէլ Կարապետեան
Վրաստանի քաղաքականութիւնը հայկական
մշակութային կոթողների նկատմամբ Սամուէլ Կարապետեան*

*Հայ - վրացական փոխ յարաբերութիւնները Բոստոմ
Հայ - վրացական կնճիղը Արշակ Չաւախեան
Մեք եւ մեր հարեւանները Արտաշէս Արեղեան
Հայ - վրացական յարաբերութիւնները Սամուէլ Կարապետեան
Ժամանակակից փոլուր Սերգէյ Շաքարեանց
Վրաստանի անկախութեան աղբիւրը եւ հայ -
վրացական յարաբերութիւններուն հեռանկարը Բիւրբուր Կիրակոսեան
Իսաիկ Տէր Զուկասեան*

*Թիֆլիսի հայութիւնը Օֆելիա Գրիգորեան - Շահագեան
Արխալիայի հայկական համայնքը Հայկազուն Ալվրցեան*

*Աջարական հանգոյց Սամուէլ Էվոյեան
Վրաց քաղաքական մօտեցումները Ախալքիսա -
Ախալքայաք գօտու մահնէրական բնակչութեան
ինդրի առնչութեամբ Սամուէլ Կարապետեան
Ռազմական համագործակցութիւնը Սամուէլ Կարապետեան
Ռուսաստանի դաշնութեան եւ Վրաստանի միջեւ Օ. Մ. Բելով*

*Չեչենական խնդիրը վրաց - ռուսական
յարաբերութիւններում Սամուէլ Էվոյեան
Թուրքիա - Վրաստան - Ադրբեջան փոխ
յարաբերութիւնների հեռանկարի հարցի շուրջ Էրուարդ Զաքարեան
Վրաստանի եւ ԱՄՆի յարաբերութիւնները Ս. Ա. Միխայլով*

*Վրաստանի արտաքին քաղաքականութեան
կերպարանափոխութիւնները Սերգէյ Շաքարեանց
Հանտի Մոլոյիլի
Հայտնուր տեղեկութիւններ Չաւախքի մասին*

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Արսէն Ուղղուցեանի մահուան առիթով, տեր եւ տիկին Աւ Փելիպպեան 100,000 լ. ո., տեր եւ տիկին Տաք Ադամեան 100,000 լ. ո., տեր եւ տիկին Սիմոն Ալեքսանդրեան 100,000 լ. ո.՝ ԲԱԸԼԻ Ծերանոցին:

● Ստեփան Գարապոյ-յաճեանի մահուան առիթով, տեարք Յարութ եւ ժողէք Ալեքսանդր 50,000 լ. ո.՝ ԲԱԸԼԻ Ծերանոցին:

ՅԱՆՈՒ ԶԱՐԿԱԲԱԾԻՆ

● 150 մ. ք. Տրպայայա-յի շրջան: Գին՝ 39,000 տո-լար կանխիկ: Հեռ. 03-605543:

ԳՐԱԲՈՒԱԾ ՕՐ

Հ.Մ.Ձ.Մ. ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

ՃԱՇԿԵՐՈՅՐ 2 ՄԱՐՏ 2002

ԼՍ ԳՐԱՆՆԵՐ

La premiere au Liban

Autoroute Jdeideh Près Boghos Optic Tél. (01) 871261

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԵ

Տիկին Յօր խտրեան եւ զաւակը՝ Կարպիս, տեր եւ տիկին Թորոս Մանուշեան եւ զաւակունքը եւ տեր եւ տիկին Րաֆֆի Չոլուզեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռաձայնով մասնակից եղան իրենց ամուսնոյն, հօր եւ հարազատին՝ ՄԿՐՏԻՉ ԽՏՐԵԱՆԻ մահուան սուգին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 3 Փետրուարին, Ամենապատիւ եւ Գերերջանիկ կաթողիկոս - պատրիարք Տաճն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Ներսէս - Պետրոս ԺԹ. կը մեկնի Ըռոմ, մասնակցելու համար քահանայապետական ԳՈՐ - ՈՒՆՈՒՄի տարեկան ժողովին: Այս առիթով ան առանձին համոզուածներ պիտի ունենայ Ըռոմի բարձրաստիճան եկեղեցակազմներու հետ: Ամենապատիւ հոգեւոր Դէյրոք պիտի վերադառնայ Գորեքաթի, 13 Փետրուարին:

Համաձայն 9Թ 17 Շոկտեմբեր 2001ին Պատրիարքական Եպիսկոպոսներու Սիմոնոսի ընթացքին տրուած որոշումին, Զմմառու Տիրամօր վանքի մայրիկ Սեծաւոր եւ պատրիարքական փոխնորդ Գերապայժար Գեորգ Թ. Ծ. վրդ. Խաղուսեան ընտրուեցաւ Ս. Երկրի եւ Եկզարբութեան Եպիսկոպոս:

Նորանշանակ Եպիսկոպոսի օժման թուականն ու վայրը պիտի հաղորդուին յառաջիկային մամուլով:

Հայ կաթողիկէ Նուիրապետութիւնը, Հիւսիսային Ամերիկայի եւ Զամանայի Կաթողիկէ հայոց առաջնորդարանը եւ Սիիթարեան միաբանութիւնը խոր ցաւով կը գուժեն վատնակարոր առաքելական եկզարբ Հիւսիսային Ամերիկայի եւ Զամանայի, ինչպէս նաեւ անոնց միաբանութեան միաբանութեան՝

ԱՐԸ. ՀԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՊՍ. ԴԵՐԱՍԱԿԵԱՆԻ վախճանումը, ինքնաշարժի արկածի պատճառով:

Յուղարկաւորութիւնն ու թաղման կարգը պիտի կատարուի Չաքաթ, 2 Փետրուար 2002, կեսօրէ առաջ ժամը 11:30ին, Պելմոնթի (Պոսթըն) հայ կաթողիկէ Ա. Մաշ եկեղեցոյ մէջ:

ԴԻՄԱՆ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԵԱՐԱՆԻ
Պէյրուք, 31 Յունուար 2002

ՊՈՒՇ ԱՐԵԱՆ ԾԱՐԱԻ ՈՒՆԻ

ԿՆՍԵ ԽԱՍՏԵՆԻ

Իրանի գերագոյն ղեկավար այսօր Ալի Խամենեյի դատապարտեց Նահապետ Նահապետի գահ ձորձ Պուշը, դիտել տալով, որ ան «ծարաւ է արեան»:

Խամենեյի, որ կը խօսէր իսլամական երկիրներէ եկած լրագրողներու հաւաքի մը, ըսաւ, որ Պուշ կը խօսի մարդկային արեան ծարաւ մարդու մը նման: Ան աւելցուց, որ ամբողջ աշխարհը գիտէ, թէ Ամերիկան է Մեծ Սատանան:

Խամենեյին առաջ, իրանցի բարձրաստիճան պաշտօնատարներ դատապարտած էին Պուշը, որ Բոննի-րէսին մէջ արտասանած տարեկան իր ճառին մէջ ըսած էր, թէ Իրան, Իրաք եւ Հիւսիսային Բորէա հաւաքական քանդումի զէնքեր պատրաստող երկիրներ են, որ մաս կը կազմեն «չարիքի առանցքի մը»: Ան ըսած էր նաեւ, որ Միացեալ Նահանգներ պիտի չարտօնեն, որ այսպիսի զէնքերով սպառնալիքներ ուղղուին իրենց:

Խամենեյի ըսաւ նաեւ, որ Իրան պիտի չարտօնակէ գորավիզ կանգնիլ պաղտոտիչեան դատին՝ անտեսելով ամերիկեան սպառնալիքները:

ՉԻՆԱՍՏԱՆ ԱՆ ԸՆՆԱՂԱՍՏԵՑ ՊՈՒՇ

Չինաստան եւս քննադատեց Պուշը «չարիքի առանցք» որակած ըլլալուն համար Իրանը, Իրաքը եւ Հիւսիսային Բորէան: Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Բոնկ Բուան ըսաւ, որ Պէյճիկի պատշաճ չի նկատեր այսպիսի բռնամիտքեր գործածուելուն միջազգային յարաբերութիւններու մէջ:

Բոնկ աւելցուց, որ Չինաստան կը հաւատայ, որ բոլոր երկիրները հաւասար աչքով պէտք է դիտուին միջազգային յարաբերութիւններու ծիրէն ներս, այլապէս՝ գործակցութեան միջոցառում կ'ապականի՝ ժխտական ազդեցութիւն ունենալով համաշխարհային եւ շրջանային խաղաղութեան ու կայունութեան վրայ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ – ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ԲԱՒՈՒՄ ԻՐԱՆԻ ՄԷՋ

Թեշվու, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Քանի մը ուսուցիչներ վիրաւորուեցան ոստիկանութեան հետ բախումի մը ընթացքին, Իրանի հարաւային շրջանին մէջ, հաղորդեց Իրանի ուսանողական լրատու գործակալութիւնը:

Յիշեալ աղբիւրը յայտնեց, որ մտաւորապէս երկու հազար ուսուցիչներ բողոքի հաւաք մը կազմակերպած էին իրանական նախարարութեան Շիրազ քաղաքի կեդրոնին դիմաց: Ուսուցիչները կը բողոքէին աշխատանքի պայմաններուն ու աշխատավարձերուն դէմ, զորս անբաւարար կը նկատեն: Գործակալութիւնը աւելցուց, որ անմիջապէս ոստիկանութիւնը հասած է ցրուելու համար ուսուցիչները, յայտարարելով, որ ցոյցը ապօրինի է: Գրեցարարներուն եւ ոստիկաններուն միջեւ տեղի ունեցած բախումին վիրաւորուած են քանի մը ուսուցիչներ: Ոստիկանները արգիլած են նաեւ ցուցարարները քայլարշաւ մը կատարել:

Անցնող քանի մը շաբաթներուն ընթացքին, ուսուցիչները բողոքի ցոյցեր կազմակերպած են Իրանի տարածքին: Ոստիկանութիւնը տասնեակ մը ուսուցիչներ ձերբակալած է:

ԷԹԱԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԻՆ

ՊՈՐՏՕ (ՅՐԱՆՍԱ), 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Յրանսական ոստիկանութիւնը ձերբակալեց պաշտօնէն անըտողական էթԱ խմբակին անդամ վեց կասկածելիներ: Անոնց բնակած տան մէջ գտնուած են նաեւ զէնքեր, ինչպէս նաեւ ռումբեր շինելու յատուկ պայթուցիկ նիւթեր եւ իրեր:

Յրանսայի մէջ էթԱ խմբակի երկրորդ թաքստոցն է, որ կը յայտնաբերուի մէջ շաբաթներու ընթացքին: Ձերբակալութիւնը յաջողոցուցած են շրջանէն 20 ոստիկաններ, ինչպէս նաեւ հակահարձակութեան պաշտօնատարներ: Ոստիկանութիւնը առաջին հերթին ձերբակալած է սպանացի մը Պորտոյի մէջ, ապա ներխուժած է տուն մը եւ ձերբակալած է հինգ հոգի, որոնց շարքին՝ կին մը:

ԷթԱ կ'ուզէ Սպանիոյ հիւսիսարեւելեան եւ Յրանսայի հարաւարեւմտեան շրջանին մէջ գտնուող Պասք շրջանին անկախութիւն շնորհել եւ այդ նպատակով 1968էն ի վեր պայքար կը մղէ:

ՊԵՐԼՈՒՍԸՈՆԻ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՕԺԱՆԴԱԿԵԼ ԱՐԺԱՆԹԻՆԻ

Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնի խոստացուած օժանդակել Արժանթինի՝ տնտեսական ծանր տագնապը լուծելու համար:

«Կը խոստանանք անպայման օժանդակել Արժանթինի 2022-ի ձեռքով եւ կ'երաշխարհենք մեր պօրակցութիւնը Արժանթինի՝ միջազգային ելեւմտական հաստատութիւններու մօտ», ըսաւ Պերլուսոնի:

Պերլուսոնի իր այս յայտարարութիւնը կատարեց հանդիպումի մը ունենալէ ետք Արժանթինի արտաքին գործոց նախարար Քարլոս Ռոնքոֆի հետ, որ երկօրեայ յաշտօնական այցելութեամբ կը գտնուի Իտալիա եւ հանդիպումներ կ'ունենայ իտալացի պետական եւ վստիկանի պաշտօնատարներուն հետ:

Արժանթինի մէջ անգործութեան եւ տնտեսական ծանր տագնապին իրրեւ հետեւանք հապարատոր արժանթինցիներ բողոքի ցոյցեր կատարեցին: Այս շաբաթակալի վրայ արժանթինցիներ կապակերպեցին նաեւ քայլարշաւ մը նախապահական պայտանի առջեւ:

Ռոնքոֆի յաջորդ քայլը պիտի ըլլայ այցելել Սպանիա եւ Միացեալ Նահանգներ, քննարկելու համար Արժանթինի տնտեսական տագնապը եւ անոր լուծման հետանկարները:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՔԻ ԴԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԵՐԺՈՂ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Իրաքի դէմ ամերիկեան պիւնտրական նոր գործողութիւն մը մերժողներուն թիւը կը բարձրանայ օրը-օրէ: Երէկ Յորդանան եւ Ֆրանսա միացան Ուաշինկթընը պուշացնող երկիրներու խմբակին:

Յորդանանի Ալ-տալլա Բ. թագաւորը երէկ պուշացնող Ուաշինկթընը, յայտնելով, որ Միջին Արեւելքի մէջ անկայունութիւն պիտի ստեղծուի, եթէ Միացեալ Նահանգներ հակահարձակութեան պատերազմին լայնորէ թիրախը Իրաքը դարձնեն: Ալտալլա, որ կը խօսէր Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլիի հետ ունենալիք հանդիպումէն առաջ, ըսաւ նաեւ, որ որեւէ ահաբեկչական կապակերպութեան համար դժուար պիտի ըլլայ Սեպտեմբեր 11-ի յարձակումը կրկնել Արեւմուտքի դէմ:

Ալտալլա թագաւոր այսօր Ալտալլա Տան մէջ հանդիպում պիտի ունենայ նախագահ Ճորձ Պուշի հետ, քննարկելու համար պաղտոտիչ սակայնէ-եան տագնապը: Սակայն կը նախատեսուի նաեւ, որ ան արժարձէ Իրաքի դէմ գործողութեան հարցը:

Ֆրանսայի պաշտօնախոսքին նախարար Ալեն Ռիշար իր կարգին հարցապարտուի մը ընթացքին ըսաւ, որ Ուաշինկթընի դաշնակցներէն շատերը կ'ապաւանտուին մեկ-մեկուսի մարտը Ալիք Մոսկուայի մէջ հանդիպումներ ունեցած էր ուս պաշտօնատարներու հետ: Մոսկուայի իրաքեան դեսպանատունը մեկ-

կիցներէն շատեր հաւանաբար յօրսվիզ պիտի չկանգնին Իրաքի դէմ նոր յարձակումներու, որոնք կ'իյնան ահաբեկչութեան դէմ պայքարի ծիրէն ներս: Ռիշար աւելցուց, որ եթէ Պուշի կառավարութիւնը փորձէ տապալել Սատրամ Հիւսէյնը, Ուաշինկթընի դաշնակցները պիտի ըլլան առաջին դատապարտողները:

ԱԶԻՋ ՊԱՐՏԱՏ ԿԸ ՎԵՐԱԴԱՆԱՅ

Իրաքի փոխ վարչապետ Թարեք Ալիք երէկ Մոսկուայէն Պաղտատ վերադարձաւ, առանց տեսակցութիւններ ունենալու ռուս պաշտօնատարներու հետ, յայտնեցին ռուսական լրատու աղբիւրները:

«Իրաք-Թաս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, շրջապատուտէ մը վերադարձող Ալիքի վերջին կայանը Մոսկուան էր, որ սակայն ան չունէր արտաքին գործոց նախարար Իկր Իվանովի հետ նախատեսուած հանդիպումը: «Ինթըրֆաքս» գործակալութիւնը սակայն հաղորդեց, որ նոր տեսակցութիւններու անհրաժեշտութիւնը չէ պացուած, որովհետեւ անցեալ շաբաթ Ալիք Մոսկուայի մէջ հանդիպումներ ունեցած էր ուս պաշտօնատարներու հետ: Մոսկուայի իրաքեան դեսպանատունը մեկ-

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԻՐՈՂԵԳԻՆ ՎԵՐԱՍՏԱՍՏԱՆԻ ԳՆԱՆՈՒՄ

Վերաւստաստել ֆոնտերը Իրաքի Ալգային խորհուրդը ընդդիմադիր ճակատին, որ կ'աշխատի տապալելու համար Սատրամ Հիւսէյնը: Յիշեալ ճակատը յայտարարեց, որ Սատրամ Հիւսէյնը չի կարողանալ արգելադրել արաբ զէնքահարմարեան արտադրութիւնը 800 հազար տոնայ պիտի ստանայ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՈՒՉՊԵՔԻՍՏԱՆԻ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ 160 ՄԻԼԻՈՆ ԾՈԼԱՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներ այս տարի 160 միլիոն տոնայ օժանդակութիւն պիտի յատկացնեն Ուաշինկթընի, ինչ որ 100 միլիոն տոնայի յաւելում մը կը նշանակէ՝ արտագործողութիւնը Աֆղանիստանի մէջ ամերիկեան ռազմարշակին, ըսած է արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչըրտ Պաուլը: Չորեքշաբթի օր:

«Յաւելեալ գումարը կ'արտագործողութիւնը Ուաշինկթընի հետ մեր սերտ գործակցութիւնը՝ հակահարձակութեան դէմ պատերազմին մէջ, ինչպէս նաեւ երկար տեւողութեան ռազմարշակին, ըսած է արտաքին գործոց նախարար Յիլըպպէթ Ճոնզ, որ երեքշաբթի օր Ուաշինկթըն կը զգայ, թէ Ուաշինկթընը կ'արտագործողութեան մարդկային իրաւանց եւ ժողովրդավարութեան խոթելի մարդը:

Քննադատութիւնը դարձեալ արտայայտուած էր այս ամիս, երբ

կառավարութիւնը հանրաբուժեց մը կազմակերպած էր՝ նախագահ Իսլամ Բարիմովի նստաշրջանը երկարաձեռնութեամբ:

Մ. Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարար Յիլըպպէթ Ճոնզ, որ երեքշաբթի օր Ուաշինկթըն կը զգայ, թէ Ուաշինկթընը կ'արտագործողութեան մարդկային իրաւանց մարդ բարելաւելու համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՕՐԻՆԱԿԱՆ ՄԱՐՁԻՆ ՄԷՋ ՓՈՒՍԴԱՐՁ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄՈՍԿՈՒԱ – ՈՒՍՇԻՆԿԹԵՆ ԴԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

ՌԱՍՇԻՆԿԹԵՆ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ եւ Մ. Նահանգներու միջեւ օրինական մարզին մէջ փոխադարձ օժանդակութեան համաձայնութիւն մը ի գործ դարձած է Հինգշաբթի օր Ուաշինկթընի ռուսական դեսպանատնէ մէջ տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը եւ Ռուսիոյ դեսպան Եւրի Ուաշինկթընը մասնակցած են հանդիսութեան, Փաուլիի եւ Ուաշինկթընը այցելող Ռուսիոյ վարչապետ Միխայիլ Գախարովի միջեւ կայացած տեսակցութեան մը ետք:

Համաձայնութիւնը, որ կնքուած է 1999ին, ռճրային պարագաներու օրինական տեղեկութիւններու փոխանակման գործընթացը կը ճշդէ:

Ռուսիոյ դեսպանատան մէջ հաղորդագրութիւնը յայտնած է, թէ անիկա յատկապէս օգտակար պիտի ըլլայ կազմակերպութեան ռճրային, թմրեցրիչ մաքսանհրճութեան եւ ահաբեկչութեան դէմ պայքարին համար:

Փաուլը յայտնած է, թէ Քախարովի հետ իր տեսակցութեան ընթացքին արժարձուած է երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններուն վերաբերեալ նիւթեր:

ԱՐԵԱԶԻՈՅ ՄԷՋ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ

ՌԱՍՇԻՆԿԹԵՆ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- ՄԱԿի կորիզային հարցերու պատասխանատու գործակալութիւնը վերաստանի անըտողական Արեւազիոյ շրջանը առաջած է խմբակ մը, որ պիտի փորձէ գրաւել կորիզային տեղափոխելի երկու սարքեր, որոնք կրնան գործածուիլ ռումբերու պատրաստութեան համար, հաղորդած է «Սայրն» թերթը Հինգշաբթի օր:

Անիկա յայտնած է, որ փայտ հաւաքող մարդիկ գտած են սարքերը, որ յայտնապէս անցեալին գործածուած է երկտրածին սարքի մը մէջ եւ հիւանդացած են զանոնք շալկելէ ետք, ինչ որ մղած է գործակալութիւնը քայլերու դիմելու:

Կառավարութեանց պաշտօնատարներ եւ գիտնականներ ունին այն մտաւախութիւնը, թէ զանազան խմբակներ կրնան կորիզային թափօններ կամ կորիզային ճարտարաբանութեան սարքեր ձեռք ձգել, այսպէս կոչուած «աղտոտ» ռումբեր պատրաստելու համար: Անոնք կրնան պայթիլ եւ թունաւոր շողորձակում տարածել:

Անիկա նուազ քանիդոգ ազդեցութիւն կ'ունենայ քան կորիզային իսկական ռումբի մը պայթումը, սակայն նոյնպէս վտանգաւոր կ'ըլլայ:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ - ՖԻԼԻԹԵԱՆՆԵՐ ՄԻԱՑԵԱԼ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ

Մ. Նահանգներ եւ Ֆիլիպիններ երէկ ընթացքի մէջ դրած են միացեալ ռազմափորձեր՝ այս երկիրն հարաւային գոտիին մէջ իսլամ ծայրայեղականներու գործունէութեան վերջ տալու համար:

Մ. Նահանգներ կ'ըսեն, թէ շրջանին մէջ գտնուող Ապու Սայյաֆ խմբակին զինեալները կապեր ունին Ուսամա Պըն Լատէնի «Գայիտա» ցանցին հետ:

Ռազմափորձերուն, որոնք առնուաբ 6 ամիս պիտի տեւեն, պիտի մասնակցին շուրջ 3800 ֆիլիպինցի եւ շուրջ 600 ամերիկացի զինուորները:

Ամերիկեան մասնաշարժը ուժերու շուրջ 160 անդամներ պիտի միանան ֆիլիպինցի զինուորներու՝ փնտտութեան գործողութիւններու ձեռնարկելու համար Պասիան կղզիին անտառներուն մէջ, ուր Ապու Սայյաֆ խմբակի անդամներ աւելի քան 8 ամիսէ ի վեր ամերիկացի միախնարներու ամուլ մը եւ ֆիլիպինցի հիւանդագետներ մը պատանդ կը բռնեն:

Խմբակը նախապէս պատանդներ սպանած է եւ ուրիշներ զատ արձակած՝ փրկագինի փոխարէն: Ռազմափորձերը պաշտօնապէս ընթացք առնելէ առաջ, շուրջ 30 ցուցարարներ ամերիկեան դրօշակը այրած են եւ զինուորներէն պահանջած, որ իրենց երկիրը վերադառնան:

Մայրաքաղաք Մանիլայի մէջ կարգ մը ցուցարարներ փորձած են ամերիկեան դեսպանատուն մտնել, սակայն ետ մղուած են:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՆԻԿԵՐԻՈՅ ՄԷՋ ՓՐԿԱՐԱՐ ԱԸՆԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԼԱԿՈՍ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Նիկերիոյ Կարմիր Խաչի անդամ փրկարար աշխատանքներ կատարող կամուրներ տակաւին կը շարունակեն փնտտել հարիւրաւոր մանուկներ, որոնք անհետացած են անցեալ շաբաթավերջին Նիկերիոյ մէջ բանակի պիւնտրութիւն պահեստանոցին մէջ ծագած իրդեհի մը պատճառով:

Հրդեհին իրրեւ հետեւանք պայթումներուն պոհ զացած են տելի քան 600 նիկերիացիներ, ինչպէս նաեւ տակաւին անպայտ կը մնան շուրջ հազար նիկերիացիներ:

Ոստիկանութեան կեդրոններ իրենց մօտ գտնուող բոլոր մանուկները պիտի յանձնեն Կարմիր Խաչին, ըսաւ Լակոսի մէջ փրկարար աշխատանքին հսկող պաշտօնատար մը:

Փրկարար աշխատանք կատարող կամուրները ընդգծեցին, որ բնակիչներուն ճակատագիրին անորոշութիւնը աւելի գէշ դարձուցած է վիճակը, սակայն դիակներ յայտնաբերելու «սեւ աշխատանք»ը տակաւին ընթացքի մէջ է:



Փրկի լուսանկարը՝ համացանցի վրայ:

որ Փրկի լուսանկարը համացանցի վրայ ծակալ է:

«Փաթիստանի Գերիլ-խանութեան վերականգնումի Ազգային Շարժումը» զգուշացուց ֓աթիս-

Ծար-ը՝ էջ 10

Շ. Յ. Դ. ԸԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՍԱՐՄԻՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹԵԱՐ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ «ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ» ՆԻՒԹՈՎ



Խորհրդատուները մասնակիցները

29 Յունուարին Շ. Յ. Դաշնակցության Հայաստանի Գերագույն Մարմինը կազմակերպությունները կայացրած է միջոցառումները...

Խորհրդատուները խոսք առած է խորհրդարանի Շ. Յ. Դ. խմբակցության ներկայացուցիչ Ադուան Վարդանյանը...

Շ. Յ. Դ. Գերագույն Մարմինը ներկայացուցիչ է Ազգային ժողովի անդամ Արմեն Ռուստամյանի համաձայն...

Խոսք առած է նաև Շ. Յ. Դ. Բիրոյի անդամ է Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերու մեջ...

Կաշառակերությունները դեմ պայքարի կառավարական ծրագիրը ներկայացուցած է Մանուկ Թովուզյանը...

Խոսք առնողները խոսքեր են քննարկում և կաշառակերության մեջ ներգրավված իշխանության կարգը...

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈՒՆՔՐՆԱՐԿՈՒՄԵՐՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԿՈՂՄԸ ՊԵՏԻ ԵՄԱՆԱԿԻՑ ԸԼԼԱՅ

Երբեք կան խորհուրդներ հայկական պատերազմական փոխ նախագահ Արմեն Ռուստամյանի 29 Յունուարին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը...

Ա. Ռուստամյանը նշեց, որ իր կողմից ներկայացուցած է նաև պարտադրությունները առումով Հայաստանի կատարած լրացուցիչ քայլերը...

հուրդները: Պեղաճորքային գեկուցումը պաշտոնապես յանձնուած է հայկական պատերազմական, երեք ամսուան ընթացքին...

Ա. Ռուստամյանը յայտնեց, որ համապատասխան մարմինները (Հայաստանի Ազգային ժողովը, արդարադատության նախարարությունը և այլն)...

Ցանկանալով իրականացնել իր շահերը, որ արտադրողները կատարեն, պիտի ծանոթանան փաստաթուղթին և իրենց դիտողությունները պետք է ներկայացնեն: Չեկուցում է ներկայացուցած դիտողություններուն հիման վրայ երակացուցումին պիտի հանուի խորհրդարանական վեհաժողովի ղեկավարը...

ՀԱՅ - ԻՐԱԿԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԵՐՏԱՅՈՒՄ

Իրաքի խորհրդարանի արտաքին յարաբերությունները յանձնախումբին հրահանգով, 21-ին 24 Յունուար, Հայաստանի Ազգային ժողովի հայ-իրաքեան բարեկամությունները անդամներ, պատգամաւոր Ղուկաս Ուլիխանյանի գլխավորությամբ, մարդասիրական շորտերը թուրքից Պարտա մեկնած էին:

Այս առնչությամբ Ղ. Ուլիխանյանը 29 Յունուարին հրահանգած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ պատերազմական անդամները Հայաստանի անդամները են իրաքի խորհրդարանի նախագահին հետ և քննարկած են երկու երկիրներու խորհրդարաններուն միջև յարաբերություններուն խորացման խնդիրներուն...

Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի հարցով գեկուցողի մը նշանակման, ապա հաւանական է, որ ան նշանակուի Ապրիլին: Ա. Ռուստամյանը նշեց, որ Երեւանի քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածին ընթացքին հայկական կողմը նշած է, որ Լեռնային Ղարաբաղին վերաբերող բոլոր քննարկումներուն ղարաբաղեան կողմը պէտք է մասնակցի, ինչ որ դրական արձագանգ ունեցած է Երեւանի կողմից:

Լատ Ղ. Ուլիխանյանի, Փետրուար - Մարտ ամիսներուն կը սպասուի իրաքի առեւտրի նախարարին գլխավորած պատերազմական այցելությունը Հայաստան, որուն ընթացքին պիտի քննարկուին երկու երկիրներուն տնտեսական յարաբերությունները միջկառավարական յանձնախումբի ստեղծման հարցերը:

ՀԻՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԲԵՐՈՒՄ

Հայաստանի Նոյեմբերեան քաղաքի Պապի Չայ թաղամասի բնակիչներին Համէթ Գուլթանեան վերջերս իր այդ ժամանակներու դամբարան մը, ուրկէ դուրս հանուցած մարդու և կենդանիներու ոսկորները:

Նմանօրինակ դամբարան մը յայտնաբերուեցաւ նաև Գուլթանեանի եղբոր հողամասին մէջ, և հոնկէ եւս դուրս բերուեցան մարդու ոսկորներ և հնագոյն սափորի կտոր մը:

ԱՐՑԱՆ ԳԱՐԻՆՏԱԿԻ ԶԱԿԱՏԱՄԱՐՏԻ 10ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

26 Յունուարին լրացաւ Քարինտակի ճակատամարտի 10րդ տարեդարձը, որ Քարինտակի մէջ մեծ շուքով նշուեցաւ:

Կազմակերպուած յուշահանգի կը մասնակցէին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասեան, պաշտպանության նախարար զօր. Սէյրան Օհանեան, ինչպէս նաև՝ Լեռնային Ղարաբաղի օրէնսդիր և գործադիր իշխանութեան ռազմաթիւ ներկայացուցիչները:

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ ՊԱՔՈՒ ԿԸ ՄԵԿՆԻ

6 Փետրուարին երկօրեայ այցելութեամբ Պաքու պիտի մեկնի Հայ լրագրողներու քսան հոգիները խումբ մը: Պատերազմական մաս պիտի կազմեն նաև Լեռնային Ղարաբաղը ներկայացնող հինգ լրագրողներ: Այցելութիւնը նախաձեռնած է և կը հովանաւորէ ԵԱՀԿը:

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՈԹՔԻ ՕՐ» ՈՒԱՆ

Յովհաննէս Պօղոս Բ. պապի հրաւերով, 24 Յունուար 2002ին, Ասիայի քաղաքի Ֆրանսիս Ասիայի վանքին մէջ տեղի ունեցաւ արարողութիւն մը զպօք աշխարհի խաղաղութեան համար: Ներկայ եղան աշխարհի բոլոր կողմերէն քրիստոնէայ, իսլամ, հրեայ, պոտտայական, շինթոյական, հինդուս կոնֆիլիքսական, սիխ, գրաղաշտական, ցայից և արիւնքեան բնագաղաղական կրօններու ներկայացուցիչներ: Արամ Ա. կաթողիկոս հրաւիրուած էր անձամբ մասնակցելու սոյն արարողութեան: Յանուար 25ին Տեղի Տեղապետը Կիլիկիայի կաթողիկոսութեան մասնակցեցաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ Օշական արք. Չոյոյեան:

Աղօթքի օրուան հանդիսութիւնը սկսաւ պապի բարի գալստեան ու շնորհակալութեան խօսքով: Զանազան կրօններու ներկայացուցիչներ իրենց կարգին վկայութիւններ տուին աշխարհի մէջ խաղաղութեան հաստատման և ժողովուրդներու բարեկամական համակցութեան մասին: Այնուհետեւ զանազան կրօններու պաշտամունքային արարողութիւններ տեղի ունեցան եկեղեցւոյ արահներուն մէջ: Քրիստոնէայ եկեղեցիներու ներկայացուցիչներ եկեղեցւոյ մէջ իրենց արարողութիւնը կատարեցին իւրաքանչիւր իր մայրենի լեզուով կարդալով Սուրբ Գրային հատուածներ: Իրենց մասնակցութիւնը բերին նաև Խալիլ Գալաթի Գրքի 21-րդ հոդուածը, վարչապետ Սիլվիո Աբուրիոյի և պետական աւագանիի:

Տասը կէտերէ բաղկացած յայտարարութիւնը ընթերցուեցաւ բոլոր ներկայներուն կողմէ: «Յանձնառու կ'ըլլանք յայտարարելու մեր հաստատ համոզումը, թէ բոլորքիւնք են ահաբեկչութիւնը խոտոր կը համեմատին կրօնքի ոգիին, և կը զատապարտենք բոլորքիւնք կամ պատերազմը: Աստուծոյ և կրօնքի անուանով կատարուած»: Դարձեալ «Յանձնառու կ'ըլլանք ներքին անցեալի թէ ներկայի փոխադարձաբար մեր կատարած սխալները և նախապաշարունակները ու գործով կը կանգնենք հասարակաց ճիշդ յարաբերելու եսամոլութիւնը ու ամբարտաւանութիւնը, ատելութիւնը ու բռնութիւնը և սորվելու անցեալէն, թէ խաղաղութիւնը առանց արդարութեան ճշմարիտ խաղաղութիւն չէ»:

Աւարտին տեղի ունեցաւ «Խաղաղութեան ողջոյն» փոխանակում և ներկայները ողջագուրուեցան եղբայրական սիրով ու յարգանքով:

ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՆՈՐԸՆՏԻՐ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆՈՎ ԿԸ ԸԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

Յունուարի կիսուն Նիւ Եորքի մէջ գումարուեցաւ Գարակէօզեան հիմնարկի տնօրէններու խորհուրդի տարեկան ժողովը, որուն ընթացքին ընտրուեցաւ հիմնարկի գործադիր մարմինը: Հիմնարկի նախագահ ընտրուեցաւ Միքայէլ Յարութիւնեան, փոխ նախագահ՝ Իրմա Տէր Ստեփանեան, անդամներ՝ Էտուարտ Չանճիկեան, Հերի Տորես, Լուիզ Նաճարեան և Ռիչըրտ Վարսեան: Մ. Յարութիւնեան հիմնարկին ընտրուած բերորդ նախագահն է՝ յաջորդելով Լէյլա Գարակէօզեանին և Բերկուրտ Սվաճեանին:

Ներկայիս հիմնարկի գործունէութիւնը կեդրուանացած է Լիբանանի, Սուրիայի և Հայաստանի մէջ: 1992 թուականին երեխաներու շտաբի առաջին ատամնաբուժարանը հիմնուեցաւ Հայաստանի մէջ, որուն հետագային յաջորդեցին որիչ հինգ բուժարաններ: Ատամնաբուժարաններին երկուքը կը գործեն Երեւանի մէջ, իսկ մէկական ատամնաբուժարաններ կը գործեն Գիւմրիի, Գորիսի, Վանաձորի և Ստեփանակերտի մէջ:

Անցաւ տարուան ընթացքին 18 հազար երեխայ քննուած և խնամուած են վերոյիշեալ ատամնաբուժարաններուն մէջ: 2001 և 2002 թուականներուն աշխատանք կը տարուի նորոգելու այն բնակարանները, որոնց մէջ որբեր կ'ապրին: Որբեր խնամելու ծրագիրը պիտի շարունակուի 2002 թուականին՝ ընդգրկելով անկարներու աթոռներ, ակնարուժական խնամք և լուրջութեան օժանդակող միջոցներ: Հիմնարկը նպատակ ունի այս տարուան ընթացքին բնակարանային օժանդակութիւն տրամադրելու պատերազմի հաշմանդամներուն:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓԻՒԻՔ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԸՈՒՐԶ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հրահանգով, Չորեքշաբթի, 30 Յունուարին, նախարարին մօտ հանդիպում կայացաւ Շ. Յ. Դ. ներկայացուցիչներու հետ, 27 - 28 Մայիսին Երեւանի մէջ գումարուելիք «Հայաստան - Սփիւրջ համահայկական երկրորդ խորհրդատուական շուքը»: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը ներկայացնէ իր փորձը անդամ վաճառ Յովհաննիսեան և Հայաստանի Գերագույն Մարմինի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյան: Խորհրդատուական կազմակերպիչ յանձնաժողովի նախագահն է հանդամնալով նախարար Օսկանեան Շ. Յ. Դ. ներկայացուցիչներուն տեղեկութիւններ փոխանցեց նախապատրաստական աշխատանքներուն մասին: Որոշուեցաւ խորհրդակցութիւնները շարունակել:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԵՐԿՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՒ ՌՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Եւրոխորհրդարանի Յունուար 12ի նիստին Հայաստանի եւ Վրաստանի մէջ Եւրոպական Յանձնաժողովի ներկայացուցիչ թորպէն Հոլթը յայտարարեց, որ Հայաստան եւ Վրաստան կրնան Եւրոպական Միութեան անդամակցել: Իր խօսքին Հայաստանին առնչուող բաժինին մէջ ղեկավար Հոլթը յայտարարեց, որ տեսականօրէն Հայաստան եւրոպական երկիր մըն է, եւ Եւրոպայի միւս բոլոր երկիրներուն նման իրաւունք ունի անդամակցելու Եւրոպական Միութեան, երբ ամբողջացնէ անդամակցութեան պահանջները եւ պայմանները: Ան նաեւ ընդգծեց, որ Հայաստանի անդամակցութիւնը Եւրոպական Միութեան պէտք է 20-30 տարի տեւէ:

Հոլթը շեշտեց, որ Հայաստանի Եւրոպական Միութեան անդամակցութեան դէմ ցցուող հիմնական խոչընդոտները Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծումը եւ թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացումն են: «Այլապէս Հայաստան մեծ դժուարութիւններ պիտի դիմագրաւէ դէպի Եւրոպական Միութիւն իր ճամբուն վրայ», ըսաւ ան:

ՀԱԿԱՀԱՅ ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԺԱՆԹԻՆՑԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԸ ՀԱՅ ԿՆՈՋ ԲԵՐՆՈՎ...

Թրքական «Թըրքիշ Տէլի Նիուզ» թերթը 12 Յունուարին հաղորդեց, որ թուրքիոյ Հանրապետական Կուսակցութեան պատասխանատուներէն Պիւլէնթ Թանյա վերջերս այցելած է Արժանթին, ուր հանդիպում մը ունեցած է տնտեսութեան նախկին նախարար Տոմինկո Քաւալլոյի հետ, որուն կինը՝ Սոնիա, իր մանկութիւնը անցուցած է Ատանայի մէջ: Ըստ «Թըրքիշ Տէլի Նիուզ»-ին, Սոնիա Քաւալլո ծագումով հայ մըն է: Մօրը անունը Անահիտ Թերզեանն է:

«Թըրքիշ Տէլի Նիուզ» իր առաջին հաղորդումէն երեք օր ետք, Յունուար 15ին, իրականութիւններ յայտնաբերողի փութկոտութեամբ մը դարձած անդարդարձաւ Պիւլէնթ Թանյա- Տոմինկո Քաւալլո հանդիպումին, այս անգամ՝ զգայացուց վերնագրով լուրով մը՝ «Թուրքիոյ մէջ եւ ճանչցալ Հայկական իրականութիւնը»: Լուրին համաձայն, արժանթինցի նախկին նախարար իր թուրք հիւրին հետ հանդիպումին ընթացքին ըսած է, թէ ինք ընտանեօք այցելած է թուրքիա՝ դասախօսութիւն մը տալու համար: Պոլսոյ մէջ ինք եւ կինը հանդիպած են նաեւ հայերու: «Կինն դէմ յանդիման գտնուեցաւ այլ իրականութեան մը: 1910ի ղէպքերը (կանաքիտիւրիցի հաւաքար Ատանայի 1909ի կոտորածից է, «Ա...») յստակ դարձան: Իրականութիւնը երեւան եկաւ: Ան չափազանց միջիջարուեցաւ, երբ զիտցաւ, որ այն, ինչ որ իրեն ըսուած էր անցեալի մասին, չէր համապատասխաներ իրականութեան...»:

ՀՐԷԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՆ ԷՃԵԻԹԸ

Միացեալ Նահանգներ կատարած իր այցելութեան ընթացքին թուրքիոյ վարչապետ Պիւլէնթ Էնելիթ հրէական երկու կազմակերպութիւններու կողմէ պարզեւտրուեցաւ երկու յուշանուէրով: «Ռիթմ Բարլիթը» պանդոկին մէջ տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին հրէական «Պընայ Պրիթ» կազմակերպութեան եւ Ամերիկեհրէական ինքնուրուի նախագահները գոհունակութիւն յայտնեցին Իւրայէլի եւ թուրքիոյ սերտ յարաբերութիւններուն համար:

«Պընայ Պրիթ» կազմակերպութեան նախագահ Ռիչըրտ Հիտմըն գնահատեց շրջանին մէջ «կայունութիւն եւ ժողովրդավարութիւն» ստեղծելու վարչապետ Էնելիթի ջանքերը եւ ըսաւ, թէ թուրքիա եւ Իսրայէլ կրնան միասնաբար վերջ տալ շրջանին մէջ տիրող «հակակրօնականութեան»:

Ամերիկեհրէական ինքնուրուի նախագահ Հերլոյթ Թէնըր իր կարգին շնորհակալութիւն յայտնեց թուրքիոյ, որ նեցուկ կը կանգնի հրեաներուն եւ կ'օժանդակէ ահաբեկչութեան դէմ Միացեալ Նահանգներու պատերազմին:

Այս առիթով, Էնելիթ շնորհակալութիւն յայտնեց իր պարզեւտրման համար եւ ըսաւ. «Պատմութեան ընթացքին թուրքերը եւ հրեաները միշտ դիմադրած են ահաբեկչութեան եւ կեղեքումի: Էնելիթ նաեւ ըսաւ, որ թուրքիոյ եւ Իսրայէլի միջեւ գործակցութիւնը պիտի շարունակուի» շրջանին մէջ ժողովրդավարութիւն տարածելու համար:

«ԱՉՂԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականը անուագ օր մը առաջ, Միւշեթ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՆՈՒՄԻ ԲԵՐԸ Բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի միւս օրը, այնպէս, որ անոնք որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

«ԳՈՐԾԱԿԱԼԸ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԵՉ»

Վերջին շաբաթներուն թուրքիա աշխուժացուցած է հակահայ քարոզչութեան իր գանգան նախաձեռնութիւնները:

Այս մասին թրքական «Սթար» թերթը Յունուար 25ի իր թիւով կը տեղեկացնէ, թէ «չուտով, յառաջիկայ քանի մը ամիսներուն» Անգարա պիտի հրաւիրուի Փիթըր Էլիոթը, էֆ. Պի. Այ. ի այն գործակալը, որ ժամանակին ձեռնարկած է Մուրատ Թոփալեանը: Մուրատ Թոփալեան ունեցած է ազգային բեղուն գործունէութիւն, ան տարիներ շարունակ վարած է Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի նախագահի պաշտօնը եւ մեծ ներդրում ունեցած է Հայաստանի եւ հայութեան առնչուող կարգերու շուրջ Միացեալ Նահանգներու մէջ տարուած քաղաքական աշխատանքներուն մէջ: Ան այժմ բանտարկուած է:

«Գործակալը Անգարայի մէջ» խորագրեալ յօդուածով մը «Սթար» կը յայտնէ, որ Էլիոթ պիտի ժամանէ Անգարա եւ մամլոյ առուելիսներու եւ սեմինարներու միջոցով պիտի տանի հակահայ քարոզչութեան: Այս ծրագրերին տեղեկատուական եւ ֆինանսական աջակցութիւն պիտի տրամադրեն Միացեալ Նահանգներու թրքական կազմակերպութիւնները: էֆ. Պի. Այ. ի գործակալը թուրքիա հրաւիրելու եւ զայն հակահայ քարոզչութեան գիտնորագրելու մտայնացումը արժանացած է «Մայր Հայրենիք» կուսակցութեան նախագահ, թուրքիոյ փոխ վարչապետ Մետուք Ելմազի հաւանութեան: Ծրագրի աշխատանքները պիտի համակարգէ կուսակցութեան փոխ

ԵՐԵՒԱՆԻ ՄԵՉ ԹՐՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՈՒՐԻ ԿԵԴՐՈՆ ԲԱՆԱԼՈՒ ԾՐԱԳԻՐ...

Թուրք-Հայկական Տնտեսական Զարգացման Խորհուրդին վերջերս հրապարակած տարեկան տեղեկագիրին համաձայն, Խորհուրդը կը ծրագրէ Երեւանի մէջ բացալ թրքական առևտուրի կեդրոն մը՝ թրքական արտադրութիւններու Հայաստանի, Ռուսիոյ եւ Կեդրոնական Ասիոյ մէջ տարածելու համար:

Տեղեկագիրը դիտել կու տայ, որ Խորհուրդը կը ծրագրէ նաեւ Երեւանի մէջ թրքական արտադրութիւններու ցուցահանդէս մը կազմակերպել:

Հայաստանի Արդիւնաբերողներու եւ Գործարարներու Միութեան նախագահ Արսէն Ղազարեանի համաձայն, «Երեւանի մէջ թրքական առևտուրի կեդրոնի մը բացումը հայ-թրքական տնտեսական յարաբերութիւնները զարգացնելու փորձ մըն է, սակայն անոր իրականացումը կախեալ է թուրքիոյ կառավարութեան գրական դիրքորոշումէն»:

Թուրք-Հայկական Տնտեսական Զարգացման Խորհուրդին տարեկան ծրագիրը կը նախատեսէ նաեւ Երկու երկիրներուն միջեւ սահմաններու բացում մը՝ յարաբերութիւններու զարգացում:

Խորհուրդը ներկայիս կ'աշխատի Երեւանի մէջ թրքական ցամաքային օդանւային գրասենեակներ բացալ եւ ցամաքային ուղիներու օգտուիլու նաեւ սփիւրքահայերը:

Նշենք, որ Թուրք-Հայկական Տնտեսական Զարգացման Խորհուրդը հիմնուած է 3 Մայիս 1997ից եւ ցարդ երկու երկիրներու ներկայացուցիչները համախմբով միակ մարմինն է:

... ԻՍԿ ՊՈՒՍՈՅ ՄԵՉ ԹՈՒՐՔ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՎԱՀԱՅ ՅԱՆՉՆԱԽՈՒՄ

Մինչ Թուրք-Հայկական Տնտեսական Զարգացման Խորհուրդը կը պատրաստուի Երեւանի մէջ թրքական առևտուրի կեդրոն մը բացալ եւ թրքական արտադրութիւններու ցուցահանդէս մը կազմակերպել, Պոլսոյ թուրք առևտրականները հայ-թրքական յարաբերութիւններուն մասին ունին բոլորովին այլ կեցածք: Վերջերս անոնք կազմած են հակահայ յանձնախումբ մը՝ «այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութեան անհիմն պնդումներուն հակադրածելու համար»:

Լուրը հաղորդող թրքական «Ճուճուրէթ» թերթին համաձայն, Պոլսոյ Առևտուրի Գրասենեակը, Պոլսոյ ձարտարարներու Գրասենեակը եւ սակաքներու փոխանակման գրասենեակը կազմած են պատմաբաններ եւ մասնագէտներէ բաղկացած յանձնախումբ մը՝ «այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութեան իրողութիւնները ժխտելու եւ Միացեալ Նահանգներու ժողովուրդը իրականութեան իրազեկ դարձնելու համար»:

Յայտնենք, որ անցեալ շաբաթ Թուրքիոյ ազգային անվանագրութեան խորհուրդի հովանաւորութեամբ գործող «Ցեղասպանութեան անհիմն պնդումներու դէմ պայքարի համակարգումի խորհուրդը» Անգարայի մէջ իր գումարած նիստին քննարկած էր Ատոմ Էլյոնեանի «Արարատ» ժապաւեկին դէմ հակադրութեան միջոցները եւ տուած էր շարք մը որոշումներ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐ ՊԻՏԻ ՅԻՇԱՏԱԿԵՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՄԵԱԿԸ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը հաղորդագրութեամբ մը կը տեղեկացնէ, որ Ապրիլ 17ին ամերիկացի խորհրդարանականները խորհրդարանային հասնող իրանի ազդեցիկներու մայրենի լեզուն, մինչ Պաքոսի մէջ պարսկերէն ուսուցանող դպրոցներ կը բացուին, ըսաւ Սաֆարի:

Յիշատակի հանդիսութիւնը, որուն ներկայ պիտի գտնուին խորհրդարանական ժաք Ռիտ, Ներկայացուցիչներու Տան անդամ Ճիմ Մըքլաւըրն եւ հանրածանօթ այլ ղէմքեր տեղի պիտի ունենայ Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբին հովանաւորութեամբ:

Հանդիսութեան հիւրերը՝ ժաք Ռիտ եւ Ճիմ Մըքլաւըրն, միշտ նեցուկ կանգնած են ամերիկահայերի հետաքրքրող հարցերու եւ մասնաւորապէս Հայկական Ցեղասպանութեան ճանաչողութեան հարցերու: Հանդիսութեան պիտի մասնակցին նաեւ Հայկական Ցեղասպանութեան մարդկային իրաւանց կազմակերպութիւնները:

ԻՐԱՆ-ԱԶՐՊԵՅՃԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՊԵՏՔ Ի ԱԻԵԼԻ ԱՄՐԱՑՈՒԻ

Կ'ԸՍԷ ԴԵՍՊԱՆ ՍԱՖԱՐԻ

Իրանի մէջ Ազրպէյճանի նախկին դեսպան Ալիար Սաֆարի ազրպէյճանական «Պի-զիմ Ասր» (Մեր Դարը) թերթին հետ վերջերս կատարած հարցազրոյցի մը ընթացքին անդարդարձաւ Իրանի ներքին գործոց նախարար Ապտուլուհէտ Մուսաուրի: Ալիար Սաֆարի հիմնովին մերժեց սահմանին բացման առաջարկը եւ ըսաւ, որ Ազրպէյճան մուտքի արտօնագրի դրուելու, որ այժմ կը կիրարկուի, ոչ միայն պէտք է պահպանուի, այլեւ սահմաններու ամրացման յանձնարար միջոցառումներ պէտք է որդեգրուին:

«Ես բոլորովին դէմ եմ Իրան-Ազրպէյճան սահմանին բացման, որովհետեւ այս մէկը կարելի չէ: Ազրպէյճան Հայաստանի հետ պատերազմական վիճակի մէջ է: Այս կացութեան մէջ գտնուող երկիր մը չի կրնար իր սահմանները բացալ: Սահմաններու բացումը պարագային խոտովարար ուժեր Ազրպէյճան պիտի թափանցեն», ըսաւ Սաֆարի: Նշեց նաեւ, որ «Հայեր եւս կրնան թափանցել այդ սահմանէն»: Ան ըսաւ, որ սահմանները ընդհանրապէս կ'արգելու իր մայրենի լեզուն»:

«Անոնք չեն ճանչնար 40 միլիոնի հասնող իրանի ազդեցիկներու մայրենի լեզուն, մինչ Պաքոսի մէջ պարսկերէն ուսուցանող դպրոցներ կը բացուին, ըսաւ Սաֆարի: Սաֆարիի համաձայն, իրանեան բարեսիրական հաստատութիւններ, օգտուելով Ազրպէյճանի մէջ տիրող ընկերային տնտեսական վիճակէն եւ օժանդակութիւններ տրամադրելով՝ իրենց հակաշիւտիստ կ'առնեն Ազրպէյճանի քաղաքացիները: Իսլամ կրօնաւորներ մղկիթներու մէջ Ազրպէյճանի հակաբարոզութիւնը կ'ընեն, միայն միտքով հակահայ քարոզչական ընդհանուր գործունէութեամբ»:


Հանդիսութեան հիւրերը՝ ժաք Ռիտ եւ Ճիմ Մըքլաւըրն, միշտ նեցուկ կանգնած են ամերիկահայերի հետաքրքրող հարցերու եւ մասնաւորապէս Հայկական Ցեղասպանութեան ճանաչողութեան հարցերու: Հանդիսութեան պիտի մասնակցին նաեւ Հայկական Ցեղասպանութեան մարդկային իրաւանց կազմակերպութիւնները:

Իրանի մէջ Ազրպէյճանի նախկին դեսպանը կրօնաւորներ կ'ամրայանն աներկայացնող

ներկայացուցիչներ: Հաղորդագրութեան մէջ յիշուած է, որ անցողիկ խորհրդարանական ման հանդիսութիւն մը տեղի ունեցած էր, Հայ-թեանը:

Երեւանի ինքնուրուի նախագահ Հերլոյթ Թէնըր իր կարգին շնորհակալութիւն յայտնեց թուրքիոյ, որ նեցուկ կը կանգնի հրեաներուն եւ կ'օժանդակէ ահաբեկչութեան դէմ Միացեալ Նահանգներու պատերազմին:

Յուցահանդէսին բացումը կատարելով՝ Երեւանի ինքնուրուի նախագահ Հերլոյթ Թէնըրը հարգանքներ արտայայտեց իր կողմէ իրականացուած իր քաղաքացիական իրաւանց կազմակերպութիւնները:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի խումբը Լիբանանի մեջ միշտ ալ նկատուած է իբրև լուսագոյն կապուտներ մէկը, իսկ երկա՛ր տարիներ ալ իրաւամբ ընկալուած է իբրև տիտան:

Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք, սակայն, եւ յատկապէս վերջին հնգամեակին, պատկերը նոյնը չէ անշուշտ: Մեր խումբը կ'ապրի վերիվայրումներ, իսկ այսօր կը պարզէ ոչ նախանձելի վիճակ մը եւ մատնուած է շատ նեղ կացութեան:


Ասիկա չի նշանակեր անշուշտ, որ կացութիւնը պիտի մնայ այսպէս: Ոչ: Հ. Մ. Ը. Մ.ի խումբը նախապէս ալ ապրած է նման կացութիւններ, սակայն շնորհիւ կազմակերպական իր կառոյցին, գաղափարախօսական իր համոզումներուն ու մանաւանդ իր աննկուն ու վճռակամ համակիրներու բանակին, ան յաջողած է շրջանցել դժուարութիւնները: Այսօր ալ տարբեր չէ երէկէն: Այսօր ալ պիտի դիմագրաւենք դժուարութիւնները, ներկայ արգելքն ալ պիտի շրջանցենք: Պիտի մնա՛նք պատնէշին վրայ: Չկայ խրամին միւս կողմը անցնիլ: Անկարելին կարելի պիտի դարձնենք, որպէսզի յաջողիսք կանգուն մնալ: Պիտի մնա՛նք:

Առ այդ, Հ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը կը վերակազմակերպենք՝ առաջին հերթին նշանակելով նոր յանձնախումբ, որուն պարտականութիւնն է ամենայն վճռակամութեամբ ու լրջութեամբ լծուիլ աշխատանքի՝ գործադրելու վերոյիշեալ բոլոր ընտրութիւնները անխտիր: Նոր յանձնախումբի անդամներն են եղբայրներ՝

- Նարեկ Աբրահամեան
- Խաչիկ Քեօսէեան
- Ռաֆֆի Թիթիկեան
- Յովսէփ Մարգարեան
- Ժանօ Գասապեան
- Հրակ Ոսկերիչեան
- Սեպուհ Գեղորգեան

Հ. Մ. Ը. Մ.ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
31 Յունուար 2002

ԱՐԿԱԾԸ ՄԵՐ ՊԱՏՃԱՌՈՎ ԷՐ



Պարիզելլօ (ձախից) եւ Շումպեր

Ֆորմուլա 1-ի աշխարհի ախոյեան գերմանացի վարորդ Միքայէլ Շումպերը, երէկ իտալական «Վազբթթա Տելլօ Սփոր» օրաթերթին հետ իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ անցնող քանի մը օրերուն, իր եւ Ֆեռարիի երկրորդ վարորդին՝ պրագիցի Ռուպէնի Պարիզելլոյի ունեցած արկածներուն պատճառը իրենք էին, որովհետեւ ինքնաշարժը ոչ մէկ թերմիջ հարց ունէր:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԲԱԾԱԿԻՍՐՅԱԾԱՐԸ ՊԱՅԵՐՆ, ՊԱՅԵՐ, ՇԱԼՔԵ ԵՒ ՔԵՕԼՆ ՀԱՍԱՆ ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ


Գերմանիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարքի քառորդ աւարտականի մրցումներուն, Պայէրն Միւնխի դժուարութեամբ ապահովեց կիսաւարտական հանգրուանին իր տունը, փենայթիներով՝ 5-3 պարտութեան մատնելէ ետք իր մրցակիցը՝ Քայլերայալտըրը: Մրցումին 120 վայրկեաններ վերջ գտան 0-0 արդիւնքով: Պայէրն Լեյքերսուպըն իր դաշտին վրայ դիրքին յաղթանակ մը արձանագրեց 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով իր հիւրը՝ 1860 Միւնխիը: Տիւրիսթր Պերպարով (66րդ եւ 73րդ) եւ Թոմաս Պրտանիչ (80րդ) նշանակեցին Պայէրնի կողմը:

Քէօլն 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Հերթա Պերլինը (իտ երկարաձգման), իսկ Շալքե 2-0 արդիւնքով Բ. դասակարգին մաս կազմող Ռոթը - Ուէս Օպրիտուերը:

ԼԵՅՔԸՐԶ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՄԵՃԻՔԸ

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԷՆ. ՊԻ. ԷՅ.ի երէկուան մրցումներուն, Լոս Անճելըս Լէյքըրս կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 111-93 արդիւնքով յաղթական վերադարձաւ Օրլանտօ Մէճիքի դաշտէն, արձանագրելով եղանակ իր 31րդ յաղթանակը: Հակառակ այդ մէկին սակայն, անիկա կը գրաւէ Խաղաղական գօտիի (Արեւմտեան շրջան) երկրորդ դիրքը՝ Սաքրամենթօ Քիւնկլի ետին, որ արձանագրած է 33 յաղթանակ:



Քարլ Մայոն կողով մը ճշանակած պահուն

Լէյքըրսի յաղթանակը կերտողները եղան Շաքիլ Օնիլ եւ Քոպէ Պայլընթ: Առաջինը նշանակեց 30 կէտ եւ 14 ռիպաունտ, իսկ երկրորդը՝ 23 կէտ եւ 8 ռիպաունտ: Այսպիսով, յաջորդաբար 7րդ մրցումն ըլլալով Մէճիք պարտուեցաւ Լէյքըրսին:

Սալթ Լէյք Սիթիի մէջ, Եութա ձէյ 90-78 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Շիքալօ Պուլվը, որ այսպիսով կրեց եղանակի իր 35րդ պարտութիւնը: Յաղթական կազմին մարզիկ Քարլ Մայոն նշանակեց 18 կէտ, իսկ անոր խմբակից ձոն Սթրթոնը՝ 16 կէտ եւ 10 էսիսթ:

Հակառակ միայն 18 կէտ նշանակելուն, Մայոն նշանակեց իր ասպարէզիկի 34 հաւարտերով կէտը: Սակայն ան տակաւին 387 կէտ պակաս նշանակած է առաւելագոյն կէտերը նշանակած Քարիմ Ապտիլ - Ժապպարէն:

Ֆիլադելֆիայի մէջ Սիքսըրս 96-91 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Միւնեսթա Վուլվ:

Կեդրոնական գօտիի Միլուոքի Պաքս Թորնթօ Ռեփթըրս 26 Ֆիլադելֆիա Սիքսըրս 23 Օրլանտօ Մէճիք 23 Ռաշիոնկըն Ռիպաունտ 21 Նիւ Եորք Նիքս 18 Մայեմի Հիթ 16

Խաղաղական գօտիի Սաքրամենթօ Քիւնկլ 33 Լոս Անճելըս Լէյքըրս 31 Փորթլենտ Թրէյլ Պլէյլըրս 23 Սիթըլ Սուփըրսոնիքս 23 Լոս Անճելըս Քիւնկլ 23 Տէօնիքս Սանկ 22 Կոլտրն Սթէյթ Ուորիըրս 14

Մեմֆիս Կրիպլիզ 83-82

Ֆիլադելֆիա Սիքսըրս - Միւնեսթա Վուլվ 96-91

Տիւրքիոյ Փիսթընկ - Աթլանթա Հոքս 88-71 Լոս Անճելըս Լէյքըրս - Օրլանտօ Մէճիք 111-93

Եութա ձէյ - Շիքալօ Պուլվ 90-78

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:

Ուաշինկթըն Ուիլյարտ - Քիւնկլենտ Քալիֆոռնիա

Միլուոքի Պաքս - Նիւ Ճըրզ Նէթ

Պոսթըն Սելթիքս - Թորոնթօ Ռեփթըրս Լոս Անճելըս Քիւնկլ - Սան Անթոնիօ Սփըրս

Հիւսթըն Ռոքէթը - Տալաս Մալլըրիքս

Տէօնիքս Սանկ - Փորթլենտ Թրէյլ Պլէյլըրս

Սաքրամենթօ Քիւնկլ - Սիթըլ Սուփըրսոնիքս

ՔԻԵՒՈ ՎԵՐՈՆԱ - ԼԱՅԻՈ ՌՈՍԱ՛ 3-1

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) գծով յետաձգուած մրցումի մը Քիւեօ Վերոնա իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Լացիօ Ռոման, հակառակ անոր որ հիւր կազմը Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով յաղթացած էր, շնորհիւ Քլաուտիօ Լոփէպի նշանակած կողին (7րդ): Քիւեօ իր կոլերը նշանակեց 46րդ, 79րդ եւ 88րդ (փենալթիով) վայրկեաններուն:

Ստորեւ՝ դասաւորումը (18 խումբերն ալ կատարած են 20ական մրցում):

1.- Ա. Էս. Ռոմա	45Տ
2.- Ինթեր Միլան	43 (31-12)
3.- Եուվենթուս	42 (36-17)
4.- Քիւեօ Վերոնա	40 (38-15)
5.- Ա. Սէ. Միլան	36 (37-29)
.....
16.- Լեչէ	32 (29-22)
17.- Ֆիորենցիո	19 (20-29)
18.- Ֆիորենցիո	16 (21-40)
18.- Վենցիա	11 (17-33)

ԱՆԳՆՈՅ ՅՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՄԵՆԱԼ՝ ՏԱՍԸ ՄԱՐԶԻԿՈՎ ՅԱՂԹԱԿԱՆ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 24րդ հանգրուանի մրցումներուն, 2րդ դիրքը գրաւող Արսենալ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 3-2 արդիւնքով յաղթական վերադարձաւ Պլէյբլոքի դաշտէն (17րդ), արձանագրելով եղանակ իր 13րդ յաղթանակը: Հակառակ անոր որ ըբրանացի յետասպա՛հ Օլէկ Լուսինի 58րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացաւ, սակայն լոնտոնեան կազմը յաղողեցաւ երեք կէտերը իսկ դաշտին տէրերէն, շնորհիւ Տենիս Պերկլ-Քամփի (14րդ եւ 75րդ) եւ Թիբերի Հանրիի (21րդ) կողմէ նշանակուած կողերուն, Պլէյբլոքին կողերը նշանակեց Մէթ Ենսըն (31րդ եւ 39րդ):

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Արսենալ շարունակեց մէկ կէտով ետ մնալ պարագլուխի դիրքը գրաւող Մանչեսթըրէն, որ մրցում մը աւելի կատարած է: Պոլթընի դէմ տեղի ունեցած մրցումին Մանչեսթըրի մարզիկ Օլէ Կիւնար Սոլսթըրս հեթիք մը իրագործեց (15րդ, 39րդ եւ 64րդ), իսկ չորրորդ կողը նշանակեց Ռուտ Վան Նիսթըլըրս (84րդ):

Էմիլ Հէսթի կողմէ նշանակուած կողը (57րդ), բաւարար եղաւ, որ անոր կազմը Լիվըրպուլ 1-0 արդիւնքով պարտութեան մատնէ իր հիւրը՝ Լալսթըր Սիթին, որ կը գրաւէ դասաւորման վերջին դիրքը: Մրցումին ներկայ էր 42 հազար համակիր: Նշեմք, թէ Հէսթի անցեալ Նոյեմբեր 25էն ի վեր կող չէր նշանակած:

Թոթենհամ իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մը կրեց Նիւքասթլըն: Յաղթական կազմին կողերէն մէկը նշանակեց Էլըն Շիրըր:

Ստորեւ՝ 24րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պոլթըն - Մանչ. Եունայթըտ	0-4
Չարլթըն - Տերսի Բաուլք	1-0
Սաութհեմթոն - Միլոլլըրս	0-1
Ասթօն Վիլա - Էվըրթըն	0-0
Պլէյբլոք - Արսենալ	2-3
Չելսի - Լիօ	1-0
Իփսուիչ - Ֆուլհեմ	1-0
Լիվըրպուլ - Լալսթըր Սիթի	1-0
Սաութհեմթըն - Ուեսթ Համ	2-0
Թոթենհամ - Նիւքասթլ	1-3

ԴԱՍԱԿՈՐՈՒՄ	ՄՐՑ. ԿԵՏ
1.- Մանչեսթըր Եունայթըտ	25 48
2.- Արսենալ	24 47
3.- Նիւքասթլ	24 46
4.- Լիվըրպուլ	25 46
5.- Լիօ	24 42
.....
18.- Պոլթըն	24 25
19.- Տերսի Բաուլք	24 19
20.- Լալսթըր Սիթի	24 17

ԱՅՂԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ...

Շարունակուած Ա. Էջէն վերջերուն կ'ուզէ վերջ տալ այդ հրամանատարութեան: Չորեքշաբթի օր, Քարգայ կոչ ուղղած էր ՄԱԿին, որ միջազգային ուժերուն թիւը աւելցնէ եւ գանձեք հաստատէ այլ քաղաքներու, ինչպէս նաեւ՝ Քապուլի մէջ:

Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէտթըր երէկ հրաժարած է նախապէս իր բանբերին կողմէ կատարուած այն յայտարարութեանէն, թէ Գերմանիա կրնայ Աֆղանիստանի մէջ միջազգային ուժերուն հրամանատարութիւնը ստանձնել:

Միւս կողմէ, ամերիկեան գաղտնի սպասարկութեան գործակալութիւններ ներքին ծիրի մէջ ահագանգ հնչեցուցած են, զգուշացնելով, թէ իսլամ ծայրայեղականներ կը ծրագրեն դարձեալ հարուածել եւ կարելիութիւնը այն է, թէ թիրախ ամերիկեան կորի-կային գործարան մը ըլլայ, հաղորդած է «Ուաշինկթըն թալկ» թերթը իր երէկուան թիւին մէջ:

Անիկա ըսած է, թէ զգուշացում տեղի ունեցած է անցնող 2 շաբաթներուն՝ գաղտնի տեղեկագիրի մը մէջ, ուր նշուած են հաւանական 6 թիրախներ եւ յարձակումի ձեւեր:

Չորեքշաբթի օր Սի. Ա.Յ. Էյ.ի մէկ տեղեկագիրը յայտնած է, թէ հաւաքական քանդումի զէնքեր գործածող ահաբեկիչներու վտանգը աւելի եւս բարձրացած է Սեպտեմբեր 11էն ի վեր, եւ թէ ծայրայեղական խմբակներ կը թուին շատ հետաքրքրուած ըլլալ քիմիական կարգ մը նիւթերով՝ ուտեստեղէն եւ ջուր վարակելու համար:

Անիկա ըսած է, թէ հաւաքական քանդումի զէնքերու մասին լայնածիր տեղեկութիւններ կարելի է քաղել համացանցէն եւ նախկին խորհրդային Միութեանէն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍԷՆՏԻՆԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՁՈՒԻ
ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ՀԵՌՈՒ ՊԱՀԵԼ
ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՈՒԹԵՆԷ

ՏՈՒՊԱՅ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Սենտակամ Արաքիոյ կրօնական գերագոյն իշխանութիւնը դպրոցներէն ու ուսուցիչներէն պահանջեց պատանիները հեռու պահել ծայրայեղականութենէ, դիտել տալով, որ իսլամութիւնը չափաւորականութեան ու խաղաղութեան կրօնքն է:

Սենտակամ Արաքիոյ գլխաւոր միֆթին՝ շէյխ Ապտէլապիպ Շէյխ Կոնչաքուց չարիք քարոզողները, որոնք ատելութիւն ու անհանդուրժողութիւն կը սերմանեն պատանիներու մտքերուն մէջ: Շէյխ, որ կը խօսէր Ռիատի համալսարանին դասախօսներուն եւ ուսանողներուն, ըսաւ նաեւ, որ իւրաքանչիւրը պէտք է տէրը դառնայ իր պարտականութիւններուն եւ գիտակցի իր պատասխանատուութեանը՝ լուսաբանելով ու ճիշդ ուղիին առաջնորդելով երիտասարդներն ու պատանիները եւ հեռու պահելով չարիք քարոզողներու ազդեցութիւններէն: Միֆթին աւելցուց, որ այդպիսի քարոզիչներ կ'ուզեն դիտել ատելութիւն սերմանել իսլամութեան դէմ:

ԹՈՒՐՔԻԱ
ՍԵՋԷՐ ԿԸ ՎԱԻԵՐԱՑՆԷ
ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՕՐԷՆՔ ՄԸ

ՍՆԳՄՐԱ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեճմէթ Սեյդեր Հինգշաբթի օր վաւերացուցած է դրամատանային օրէնք մը, որ Թուրքիոյ համար կենսական կը նկատուի՝ յառաջիկայ շաբաթակիցի հրամանակ Միջազգային Ֆոնտի հետ 12 միլիարտ տոլար նոր վարկի մը գծով համաձայնութեան մը գոյացումին համար:

Նախագահը անգամ մը վերօ դրած է օրէնքին դէմ, սակայն խորհրդարանը երկրորդ անգամ անփոփոխ կերպով որդեգրած է պայմանագրային հարցը, որ պայմանագրային կերպով վաւերացնէ:

Դ. Մ. Ֆոնտը պատասխանատուներու ժողով մը պիտի կայացնէ Փետրուար 4ին քննարկելու համար Թուրքիոյ յատկացուելիք վարկին հարցը:

ՊԵՐՏԵՉՈՎԱՔԻԻ ԿՐԱՅ
ԾՆՇՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԲԱՐՉՐԱՆԱՆ

Ռուսիոյ մերթիմ գաղտնի սպասարկութիւնները քննութիւն բացած են միլիոնատէր անտերական Պորիս Պերեգոփի եւ չեչէն անջատողական ըմբոստներու միջեւ կապերու մասին, հոդորդած է «Ենթըրֆաքս» լրատու գործակալութիւնը:

Ընդհանուր զատախազին գրասենեակին հրահանգով Պերեգոփի եւ անոր մէկ գործակիցին շուրջ քննութիւնը անելի եւս պիտի ճշդ գործարարը, որուն պատկանող «Թի. Վի. 6» պատկերասփիռի անկախ կաշառք ուր օր առաջ միայն փակուած էր Մոսկուայի մէկ ատենանի կողմէ:

«Ասիկա կը վերաբերի այդ անհատներուն Չեչենիոյ մէջ զինեալ ապօրինի խմբակներու հետ կապերու», ըսած է գաղտնի սպասարկութեանը բանբերը:

Անցեալ շաբաթ սպասարկութեան վարչիւր՝ Նիքոլայ Փարրոշեւ, յայտնած էր, թէ կան փաստեր, ըստ որոնց, Պերեգոփի, որ անցեալին Կրեմլինի մէկ սերտ զաշնակիցը եղած է, չեչէն ըմբոստները կը ֆինանսատրէ:

Պերեգոփի հերքած է ամբաստանութիւնները:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՈՒԺԸ ՊԵՏԷ Է
ՍՏԱՆՁՆԷ ՄԱԿԵՂՈՆԻՈՅ ՍԷՋ
ԽԱՂԱՂԱՐԱՐ ՈՒԺԵՐՈՒ
ՎՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԿԸՍԷ ԱՍՆԱՐ

ՄԱՍՐԻՏ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Սպանիոյ վարչապետ Խոսէ Մարիա Անար Հինգշաբթի օր յայտնած է, թէ կ'ուզէ, որ Եւրոպական Միութեան նոր կազմուող արագ հակադարձութեան ուժը ստանձնէ նախկին եւկոսալի Մակեդոնիոյ մէջ խաղաղարար ուժերու պատասխանատուութիւնը:

Սպանիա ներկայիս Ե. Միութեան նախագահն է:

Ե. Միութիւնը արդէն իսկ իր արագ հակադարձութեան ուժը մասամբ գործօն հռչակած է, սակայն անկախ չ'ակնկալել, որ պիտի կարենայ ճշդած 60 հազար ուժերը հաստատել 2003 թուականէն առաջ:

Եթէ որդեգրուի որոշումը, Մակեդոնիոյ գործողութիւնը պիտուրական միացեալ առաջին գործողութիւնը պիտի ըլլայ՝ Ե. Միութեան սպաներու ամբողջական հրամատարութեան ներքեւ:

3200 ՔԿ. ԱՐԲԱՆԵԱԿ ՄԸ՝
ԴԷՊԻ ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

ՈՒՍՇԻՆԿԹԸՆ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Ամերիկեան շուրջ 3200 քկ. կշռող արբանեակ մը Չորեքշաբթի օր դէպի երկրագունդ եւ Եգիպտոսի կեդրոնը ուղղուած է, սակայն տակաւին յստակ չ'է, թէ բեկորներ գետնին բախա՞ծ են, յայտնած է ՆԱՍԱ Հինգշաբթի օր:

«Էքսթրիմ ԱլթրաՎայլը Էքսպլորըր» արբանեակը, որ երկրագունդին շուրջ ծիրի վրայ դրուած էր 1992ին, երկրագունդին մթնոլորտին մէջ մտած է Կրիսիէի ժամով՝ ժամը 4:15ին: «Կ'ակնկալուէր, որ անիկա բեկորներու վերածուի եւ մեծ համեմատութեամբ այրի մթնոլորտին մէջ», ըսած է բանբեր մը թղթակիցներու:

ԹՈՒՆՈՒՉ ԱԶՍ Կ'ԱՐՉԱԿԷ
ԱՅԼԱԽՈՂ ՄԸ

ԹՈՒՆՈՒՉ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Թունուկ Հինգշաբթի օր ազատ արձակեց ալլախոհ մը, որ բանտարկուած էր կառավարութեան դէմ ուղղած քննադատութիւններուն համար:

Մոհամէտ Մոսաաա առաջին անգամ ձերբակալուած էր 1995ին եւ վեց ամիս ետք ազատ արձակուած: Ու՛ր ամիս առաջ ան վերստին ձերբակալուեցաւ:

Կառավարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատարը հաստատեց Մոսաաայի ազատ արձակման լուրը, սակայն չ'ըսաւ պատճառը: Երկու շաբաթ առաջ, Մոսաաա հաջողուի դիմած էր, սակայն ստամոքսային արիւնհոսութեան պատճառով, մէկ շաբաթ ետք վերջ տուած էր հաջողուին:

ԿԱՏՈՒ ՄԻ ԽՈՐՈՎԷՔ...

ՔԱՄՊՈՏԻԱ, 31 (ՌՈՅԹԸՐԸ).- Աւելի քան 400 քամպոտիացիներ անպատասխար մնացին, երբ... խորոված կատու մը պատճառ եղաւ հրդեհի, յայտնեց ոստիկանութիւնը, Հինգշաբթի օր:

Երիտասարդ մը փորձեց սատկած կատու մը խորովել. կատուն կրակ առաւ՝ հրկիպելով 62 փայտաշէն տուններ: Բարեբախտաբար հրդեհը մարդկային վնասներ չ'պատճառեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Կուլթեան մաս կը կազմեն Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, ՄԱԿի մէջ Հայաստանի ներկայացուցիչ Մովսէս Աբէլեան եւ Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեան:

Ֆորումի ընթացքին պիտի քննարկուին բազմաթիւ հարցեր, որոնց շարքին՝ անվտանգութեան եւ հակամարտութիւններու լուծման առնչուող հարցեր, տնտեսական կայուն աճի ապահովում, աղբատուութեան նուազեցում եւ այլ խնդիրներ: Ֆորումի աշխատանքներուն կողքին նաեւ պիտի կայանան երկկողմանի հանդիպումներ:

ՓԱՔԻՍՏԱՆ Կ'ԱՄՐԱՍՏԱՆԷ...

Շարունակուած Յոգ Էջէն

Նաեւ նկարներ, որոնց մէջ «Ուոլ Սթրիթ ձըրնը» ի լրագրող Փըրլի գլխուն գէջը դրուած է:

Քարաչիի մէջ ոստիկանութեան մէկ պաշտօնատարը ընդգծեց, որ իրենց ե-նամակներ չեն հասած, սակայն ե-նամակներուն բովանդակութիւնը իմացած են օրաթերթերէն եւ առեւտրական գծով յստակ քայլերու ձեռնարկած:

Հնդկաստան Փըրլի առեւտրականին հետ իր առընչութեան ենթադրեալ յայտարարութիւնները մերժեց եւ զանոնք «անհեթեթ» որակեց:

● ՀՆԴԿԱԿԱՆ դաշնակցային իշխանութիւնները պահանջեցին ոստիկանութեանէն մայրաքաղաք Պոմպէյի մէջ փնտնել չեչէն ըմբոստ մը, որ երկրին մէջ ահաբեկչական գործողութիւններ կը ծրարէ:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5067
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ԵՐՐՈՊԱԿԱՆ	ՈՒՂԱՎԱՅԵԱՑ
1. Կարդացուելիք:	1. Կողմնորոշում - Կրկնուած ձայնաւորներ:
2. Նմանապէս - Մեծ մոմ:	2. Կանգնիլ (հակ.) - Չեխ:
3. Տորրանոց - Ալբուրբենէն (հակ.):	3. Հետամուտ, յաւակնոտ:
4. Աստուած - Մեղմ հով:	4. Նախամայր - Նախիր:
5. Վառ գոյներով պատուական քար - Կեցիլ:	5. Տառի մը անունը:
6. Առն, թոռան թոռ:	6. Պատկերազարդ - Ալբուրբենէն:
7. Բամբասող - Դրամ:	7. Իգական օտար անուն - Շոն:
8. Չայն - Յարդախան շաղախ (հակ.):	8. Առարկայ - Չգտում, ջանք:
9. Յուցական ածական - Նեղութիւն:	9. Չայնակից տառեր - Նախամարդ:
10. Հուր - Թէնութիւն կամ յանձնառութիւն:	10. Սովորական կամ գործնական - Դե՛հ:

ԹԻԻ 5066

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ք	Ա	Ն	Գ	Է	Տ	Տ	Ն	Ս	
2	Ա	Ր	Ս	Է	Ն	Ա	Ր	Ա	Յ	Ի
3	Կ	Ի	Տ	Ր	Ա	Ր	Է	Ս	Պ	
4	Լ	Ա	Ա	Ի	Ա	Ձ	Ա	Կ	Պ	
5	Ա	Ս	Կ	Ե	Ր	Ա	Ն	Ր	Ա	Մ
6	Յ	Ղ	Ե	Լ	Ր	Տ	Ա	Ի	Ի	
7	Կ	Ա	Լ	Ո	Տ	Ի	Կ	Ա	Գ	
8	Յ	Ե	Յ	Ե	Ր	Տ	Տ	Ր	Ա	
9	Ա	Լ	Լ	Ե	Ր	Ն	Ա	Կ	Պ	
10	Ն	Օ	Ա	Ր	Ե	Ղ	Հ	Ա		
11	Կ	Ա	Պ	Ա	Ր	Կ	Կ	Օ	Տ	

ՇԱՐՈՆ ԿԸ ՅԱԻԻ, ՈՐ 1982ԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն

ները, որովհետեւ անոնց գործողութիւնները կը խախտեն երկրին ապահովութիւնը:

Գերմանացի վարչապետը դիտել տուաւ, որ այս պատճառով Իսրայէլ շահած է շատերու Կորակցութիւնը:

ՄԱԿի պատուիրակ Թերի Ռոտ Լարսըն ըսաւ, որ պաղեստինցիներուն ու իսրայէլացիներուն միջեւ բացուած վիճիւր պէտք է կամքով, որպէսզի խաղաղութեան բանակցութիւններու վերսկսին: Լարսըն դիտել տուաւ, սակայն, որ միայն օտար միջնորդներ կրնան կամուրջի դերը կատարել: Լարսըն աւելցուց, որ ներկայիս բոլոր տուեալները ցոյց կու տան, թէ պաղեստինցիներն ու իսրայէլացիները չկարենան յարաբարեան արձանագրել եւ լուծել տարակարծութիւնները առանց երրորդ կողմի մը միջնորդութեան եւ օժանդակութեան:

Իսրայէլեան ուժեր իսլամական Համաս շարժումի երկու պինտայներ սպաննեցին երեկ Կապայի մէջ: Բանակին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ երկու պինտայները «Կուշ Բաթիֆ» բնակեցման վայրը տանող ճամբուն վրայ թակարդ մը լարած էին անցնող պինտուրներուն:

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	0.8579
Ֆրանսական ֆրանք	7.6398
Քանադական տոլար	1.5868
Գերմանական մարք	2.2779
Նոլանտական ֆլորէն	2.5666
Չուիցերիական ֆրանք	1.7204
Պելիքական ֆրանք	46.983
Իտալական լիր	2255.15
Ճափոնական ԵԵՆ	134.67
Շուեդական քրոն	10.6747
Նորվեգիական քրոն	9.1214
Դանիական քրոն	8.6378
Մէկ սթերլինգ	1.4107